

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Շ Է՝
APPROVED

Տնօրենների կորիորդի 26/09/1994թ, թիվ 9 որոշմամբ,
By the resolution N9 of the Board of Directors on
26/09/1994,

ՓՈՓՈԽՎԱԾ Է՝
MODIFIED

Տնօրենների կորիորդի 17/03/1997թ, թիվ 3 որոշմամբ,
By the resolution N9 of the Board of Directors on
17/03/1997,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 15/04/1998թ, թիվ 1
որոշմամբ,
By the resolution N1 of the General Meeting of Shareholders
on 15/04/1998,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 03/12/1999թ, թիվ 2
որոշմամբ,
By the resolution N1 of the General Meeting of Shareholders
on 03/12/1999,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 05/05/2000թ, թիվ 1 եւ
17/07/2000 թիվ 2 որոշումներով,
By the resolutions of the General Meeting of Shareholders N
1 on 05/05/2000 and N2 on 17/07/2000,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 13/12/2001թ, թիվ 7
որոշմամբ,
By the resolution N7 of the General Meeting of Shareholders
on 13/12/2001,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 05/06/2003թ, թիվ 2
որոշմամբ,
By the resolution N2 of the General Meeting of Shareholders
on 05/06/2003,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 29/07/2004թ, թիվ 1
որոշմամբ,
By the resolution N2 of the General Meeting of Shareholders
on 29/07/2004,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 20/04/2005թ, թիվ 2
որոշմամբ,
By the resolution N1 of the General Meeting of Shareholders
on 20/04/2005,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 27/04/2006թ, թիվ 1
որոշմամբ,
By the resolution N1 of the General Meeting of Shareholders
on 27/04/2006,
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 15/11/2006թ, թիվ 3
որոշմամբ,

Գ Ր Ա Ն Յ Վ Ա Շ Է
REGISTERED

ՀՀ կենտրոնական բանկում
with the Central Bank of RoA

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Chairman of the Central Bank of RoA

Ա.Ջավադյան,
A.Javadyan

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Բիբլոս Բանկ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(Նոր համագրություն)

CHARTER
“Byblos Bank Armenia” closed join stock company
(New Edition)

By the resolution N1 of the General Meeting of Shareholders on 15/11/2006,

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 13/10/2007թ, թիվ 2 որոշմամբ,

By the resolution N2 of the Extraordinary General Meeting of Shareholders on 13/10/2007,

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի 21/04/2008թ, թիվ 2 որոշմամբ,

By the resolution N2 of the Annual General Meeting of Shareholders on 21/04/2008,

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 29/09/2008թ, թիվ 1/08 որոշմամբ,

By the resolution N1/08 of the Extraordinary General Meeting of Shareholders on 29/09/2008,

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 07/12/2010թ որոշմամբ,

By the resolution of the Extraordinary General Meeting of Shareholders on 07/12/2010,

Բաժնետերերի արտաթերթ ընդհանուր ժողովի 30/01/2013թ որոշմամբ,

By the resolution of the Extraordinary General Meeting of Shareholders on 30/01/2013,

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 08/04/2016թ. որոշմամբ,

By the resolution of the Extraordinary General Meeting of Shareholders on 08/04/2016,

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 23/11/2018թ. որոշմամբ

By the resolution of the Extraordinary General Meeting of Shareholders on 23/11/2018.

Ժողովի նախագահող՝
Chairman of the Meeting

Սեման Բասիլ
Mr. Semaan Bassil

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

1.2. Բանկում նոր բաժնետերեր կարող են ընդգրկվել բաժնետիրոջ բաժնեմասի ամբողջական կամ մասնակի օտարման միջոցով, ինչպես նաև՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու և դրանք օտարելու դեպքում:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն Կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետիրոջ (բաժնետերերի) և կառավարման մյուս մարմինների համար: Կանոնադրության հայերեն և անգլերեն տեքստերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում, գերակայում է հայերեն տեքստը:

1.4. Բանկը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Բանկի նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.5. Բանկը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

1.6. Բանկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

1.7. Բանկը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ ստանձնում իր կառավարման մարմինների միջոցով, որոնք գործում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ-իրավական ակտերով և սույն կանոնադրության համապատասխան:

1.8. Բանկն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ (առևտրային նշան):

1.9. Բանկի իրավաբանական հասցեն (գտնվելու վայր) է՝ Հայաստանի Հանրապետություն, 0002 ք. Երևան, Ամիրյան թիվ 18/3 շենք, թիվ 22 տարածք, երկրորդ հարկ:

1.10. Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝ հայերեն՝ «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն անգլերեն՝ «Byblos Bank Armenia» closed joint stock company

Բանկի կրճատ անվանումը՝ հայերեն՝ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ անգլերեն՝ «Byblos Bank Armenia» CJSC

1.11. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետիրոջ (բաժնետերերի) պարտավորությունների համար:

1.12. Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.13. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հաճախորդների պարտավորությունների համար:

1.14. Բանկն ինքնուրույնաբար է ընտրում իր գործընկերներին, որոշում է ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքները և այլ գործարքների պայմանները՝ ՀՀ

1. GENERAL PROVISIONS

1.1. “Byblos Bank Armenia” closed joint stock company, hereinafter referred to as “the Bank”, is created in accordance with the legislation of the Republic of Armenia.

1.2. New shareholders may be engaged in the Bank via full or partial sale of the shares of the shareholder, as well as via placement and alienation of additional shares as set forth by law.

1.3. The founding document of the Bank is the present Charter, provisions of which are binding on the Shareholders and management bodies of the Bank. In case of any discrepancies between the Armenian and English texts of the Charter, the Armenian text shall prevail.

1.4. The Bank is a commercial organisation with the status of legal entity, the charter capital of which is divided into certain number of shares certifying the Shareholders’ obligations with respect to the Bank.

1.5. The Bank owns separated property and is liable for its obligations with all the property belonging to it.

1.6. The Bank has an independent balance-sheet, can acquire and exercise on its behalf property and personal non-property rights, bear liabilities, be plaintiff and respondent in the court.

1.7. The Bank acquires civil rights and assumes civil obligations through its governing bodies that act in compliance with the RA legislation, normative-legal acts of the RA Central Bank and the present Charter.

1.8. The Bank has a round seal with its firm name in Armenian and English, stamps and letterheads, as well as emblem (trademark) registered in accordance with the procedure established by the law.

1.9. Legal address (location) of the Bank is: 18/3 Amiryan St., №22 area, second floor Yerevan, 0002, Republic of Armenia.

1.10. The full firm name of the Bank is:
in Armenian: «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն.
in English: “Byblos Bank Armenia” closed joint stock company

The abbreviated firm name of the Bank is:
in Armenian: «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
in English: “Byblos Bank Armenia” cjsc

1.11. The Bank is not liable for its Shareholders’ obligations.

1.12. The Bank Shareholders are not liable for the obligations of the Bank and bear the risk of losses related to the Bank activity within the value of shares belonging to them.

1.13. The Bank is not liable for its customers’ obligations.

1.14. The Bank independently selects its partners, determines interest rates for asset and liability transactions and conditions of other transactions according to the RA applicable legislation.

գործող օրենսդրությանը համապատասխան:

1.15. Բանկի կանոնադրության փոփոխությունները իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին այդ փոփոխությունների մասին տեղեկացնելու պահից:

2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկը կարող է՝

- ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.
- բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
- գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).
- դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.
- ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
- զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.
- է) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.
- ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային/լիազորագրային) կառավարում.
- թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.
- ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.
- ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).
- ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.
- ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.
- ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն.
- ժե) իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն:

2.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենսդրությամբ թույլատրված գործունեություն իրականացնելու համար: Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

2.3. Բանկը կարող է իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իր կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական գործունեություն):

Բանկը չի կարող տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր և միաժամանակ այդ անձին տվյալ արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր

1.15. Amendments to the Bank Charter take legal effect since the moment of their registration with the RA Central Bank, and in cases provided by the Law – since the moment of notifying the state bodies carrying out such registration.

2. THE BANK OPERATIONS

2.1. In the manner stipulated by the RA legislation the Bank has the right to:

- a) accept call and time deposits;
- b) extend commercial and consumer loans, including mortgage loans, effect financing of debt or commercial transactions, factoring;
- c) issue bank guarantees and letters of credit;
- d) open and operate accounts, including correspondent accounts of other banks;
- e) provide payment and clearing services and/or otherwise service customers' accounts;
- f) issue, purchase, sell and service securities, effect other similar transactions;
- g) carry out investment and subscription activities;
- h) render financial agent's (representative's) services, manage other persons' securities and investments (trust management);
- i) purchase, sell and manage bank's gold, standardized bullions and commemorative coins;
- j) purchase and sell (exchange) foreign currency, as well as effect future, option and other transactions in drams and foreign currency;
- k) carry out financial leasing;
- l) accept in custody precious metals, stones, jewelry, securities, documents and other values;
- m) provide financial and investment consulting services;
- n) create and maintain customers' credit standing information system, conduct debt repayment activity;
- o) carry out activities of insurance agent.

2.2. The Bank may enter into any civil and legal transactions necessary or desirable for carrying out activities allowed by the legislation. The Bank may not carry out industrial, commercial and insurance activities, unless otherwise provided by the RA legislation.

2.3. The Bank may conduct investment activities, on its own or its customers' behalf and account buy or otherwise acquire and alienate shares, bonds or other investment securities, or acquire other persons' (issuers') shares, bonds and other investment securities for allocation (subscription activities).

The Bank may not allocate securities of a person and at the same time provide loans to the latter for payment of liabilities deriving from those securities.

տրամադրել:

2.4. Առանց ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնության բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4,99 տոկոս և ավելի մասնակցություն է.

բ) մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.

գ) բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը:

ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը մեկ այլ անձի կամ միևնույն անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

3. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնց վերաբերյալ տեղեկությունները չեն ընդգրկվում սույն կանոնադրության մեջ:

3.2. Բանկի մասնաճյուղը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն կամ սույն կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

3.3. Բանկի ներկայացուցչությունը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

3.4. Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները իրավաբանական անձինք չեն և գործում են Բանկի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

3.5. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը տրամադրում է Բանկը: Բանկն իրականացնում է մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքի հաշվառում Բանկի ընդհանուր հաշվեկշռում:

3.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարները նշանակվում են Բանկի կողմից և գործում են Բանկի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

3.7. Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Բանկի անունից, որը պատասխանատու է նրանց գործունեության համար:

3.8. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման, լուծարման մասին որոշումներն ընդունում է, ինչպես նաև դրանց կանոնադրության հաստատումն իրականացնում է Բանկի խորհուրդը:

4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 26 249

2.4. Without prior approval of the RA Central Bank, the Bank is prohibited to conduct such operations or transactions, as a result of which the Bank's share:

a) in another person's charter capital reaches or exceeds 4,99%;

b) in a single person's charter capital exceeds 15% of the Bank's total capital;

c) in all persons' charter capitals exceeds 35% of the Bank's total capital.

Prior approval of the RA Central Bank shall be required for conducting such operations or transaction, as a result of which the Bank's share in another or the same person's charter capital will exceed 9%, 15%, 25%, 35%, 50%, 70% or amount to 100%.

3. BRANCHES AND REPRESENTATIVE OFFICES

3.1. The Bank may set up branches and representative offices both in the territory of the Republic of Armenia and abroad, data about which are not included in this Charter.

3.2. The Bank branch is a separated subdivision without the status of legal entity and situated outside of the Bank's location. It operates within the scope of authorities provided by the Bank and conducts on behalf of the latter banking transactions or effects financial operations defined by this Charter.

3.3. The Bank's representative office is a separated subdivision without the status of legal entity and situated outside of the Bank's location. It represents the Bank, conducts financial market research, signs contracts on behalf of the Bank and performs other similar functions. A representative office may not execute banking transactions and financial operations defined in this Charter.

3.4. Branches and representative offices are not legal entities and act on the grounds of charters approved by the Bank.

3.5. Branches' and representative offices' property is provided by the Bank. The Bank conducts in its general balance sheet separate accounting of its branches' and representative offices' assets and liabilities, income and expenses.

3.6. Managers of branches and representative offices are appointed by the Bank and act on the basis of powers of attorney granted by the latter.

3.7. Branches and representative offices carry out their activities on behalf of the Bank, which is liable for their activities.

3.8. Decisions on creation and liquidation of branches and representative offices shall be taken, and their charters shall be approved by the Bank Board.

4. CHARTER CAPITAL AND RESERVES OF THE BANK

4.1. Charter capital of the Bank makes up 26,249,100,000 (twenty six billion two hundred forty-

100 000 (քսանվեց միլիարդ երկու հարյուր քառասունինը միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

Բանկի կանոնադրական հիմնադրամը բաղկացած է 262 491 (երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր ինսունմեկ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերից, 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.2. Բանկը կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը:

4.3. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկը կարող է տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսերի հետևյալ տեսակները՝

ա) հաստատագրված շահութաբաժնով,

բ) փոփոխական շահութաբաժնով,

գ) կուտակման,

դ) փոխարկելի:

4.4. Բանկում ստեղծվում է գլխավոր պահուստ՝ չնախատեսված կորուստների փոխհատուցման նպատակով:

4.5. Գլխավոր պահուստը ստեղծվում է Բանկի տրամադրության տակ մնացած չբաշխված շահույթից: Գլխավոր պահուստին գումարի հատկացման չափը որոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, ելնելով Բանկի ֆինանսական տարվա արդյունքներից՝ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից ոչ պակաս:

4.6. Բանկի կառավարման բարձրագույն մարմնի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստներ, որոնք կարող են նպաստել Բանկի զարգացմանը և Բանկի աշխատակիցների սոցիալական կարիքների բավարարմանը:

4.7. Բանկի այլ պահուստների ձևավորումը, ինչպես նաև չափը որոշվում է Բանկի կառավարման բարձրագույն մարմնի կողմից՝ ելնելով Բանկի ֆինանսական տարվա արդյունքներից:

5. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԸ (ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ)

5.1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել օտարերկրյա, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտները՝ բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Բանկի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերն ունեն միևնույն իրավունքները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3. Բանկի հասարակ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի՝

ա) մասնակցել ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

բ) մասնակցել Բանկի կառավարմանը:

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից:

դ) Բանկի կողմից լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման մասին ծանուցում ստանալուց հետո 60 օրվա ընթացքում առաջնահերթության կարգով ձեռք բերել այդ բաժնետոմսերը:

ե) օրենքով սահմանված կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին՝ իր կողմից տրված գրավոր դիմումի համաձայն:

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի:

nine million one hundred thousand) RA drams.

The Bank's charter capital consists of 262,491 (two hundred sixty two thousand four hundred and ninety-one) ordinary registered shares, each with par value of 100,000 (one hundred thousand) RA drams.

4.2. On the basis of the Shareholders' General Meeting decision the Bank may increase the size of its charter capital through increase of the shares' par value or issuance of additional shares.

4.3. The Bank may issue and place preferred shares according to the procedure established by the RA applicable legislation. The Bank may issue the following types of preferred shares:

a) with fixed dividend;

b) with variable dividend;

c) cumulative;

d) convertible.

4.4. The Bank shall form General reserve for covering unforeseen losses.

4.5. The General reserve shall be formed out of the Bank's retained earnings. Size of allocations to the General reserve shall be fixed by the Shareholders' General Meeting on the basis of the Bank's fiscal year results, which, however, may not be less than the minimum size stipulated by the legislation.

4.6. Based on the decision adopted by the Bank supreme management body, the Bank may create other reserves facilitating the Bank's development and satisfaction of the Bank employees' social needs.

4.7. The formation, use and size of other reserves shall be determined by the Bank supreme management body, based on the Bank's fiscal year results.

5. SHAREHOLDERS OF THE BANK

5.1. In formation of the Bank's charter capital may participate Armenian and foreign physical and legal persons, as well as enterprises without the status of legal entity, exclusively pursuant to the procedure established by the RA legislation.

5.2. Holders of the Bank's ordinary shares enjoy equal rights, with the exception of cases envisaged by the law.

5.3. A holder of ordinary share of the Bank is entitled to:

a) participate in the Bank's General Meeting with right to vote in respect of all issues falling within its competence;

b) participate in the management of the Bank;

c) receive dividends out of profit generated from the Bank activities;

d) within 60 days of notification by the Bank of any additional share issuance, obtain in priority order such shares;

e) receive any information on the Bank activity, other than confidential, as well as get familiarized with balance sheets and statements on the basis of written application filed by him/it;

f) authorize a third person to represent his/its rights at the Bank Shareholders' Meetings;

է) Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 60 (վաթսուն) օրվա ընթացքում, երկուսից ոչ ավելի առաջարկություն ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, եթե ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2%-ի սեփականատեր է.

ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների քանակի չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը՝ բաժնեմասին համապատասխան.

ժա) բողոքարկել այլ բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից օտարված բաժնետոմսերի գործարքը, եթե այն հակասում է ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը,

ժբ) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

5.4. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) բանկի խորհրդի, տնօրինության, գործադիր տնօրենի (այսուհետ՝ «գլխավոր գործադիր տնօրեն») և ֆինանսների և վարչարարության ղեկավարի (այսուհետ՝ «գլխավոր ֆինանսական տնօրեն») վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկությունները.

բ) բանկի խորհրդի անդամների, գլխավոր գործադիր տնօրենի և գլխավոր ֆինանսական տնօրենի՝ նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև՝ մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը

գ) բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են բանկի կողմից ցպահանջ և ժամկետային ավանդներ ընդունելու, առևտրային և սպառողական վարկեր տրամադրելու, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր տալու, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում և ֆակտորինգ իրականացնելու, բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ) տրամադրելու, թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ գնելու, վաճառելու և կառավարելու, արտարժույթ գնելու և վաճառելու (փոխանակելու), այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ կնքելու և

g) within 60 (sixty) days after the end of the Bank's fiscal year submit no more than two proposals on the annual meeting agenda, if he/it is a holder of at least 2% of voting shares;

h) vote at the Meetings in proportion to the voting shares possessed by him/it;

i) file an appeal with the court against the Meeting decisions that conflict with applicable laws and other legislative acts;

j) in case of the Bank liquidation receive a part of the Bank property proportional to his/its share;

k) appeal share alienation transactions conducted by other Shareholders, if such transaction contradicts the RA legislation and this Charter;

l) enjoy other rights envisaged by the Bank Charter and the RA legislation.

5.4. At the request of each Shareholder possessing 2% or more of the Bank's outstanding voting shares the Bank shall provide him/it the following information (even if such information constitutes banking, commercial or other secret):

a) information concerning the Bank Board, the Management Committee, the Executive Director (hereinafter referred to as the "Chief Executive Officer" or the "CEO") and the Head of Finance and Administration (hereinafter referred to as the "Chief Financial Officer" or the "CFO"), as stipulated by the law;

b) amount of the total remuneration (including bonuses, payments for certain works performed for the Bank, other income equalized to salary) received by the Bank Board members, Chief Executive Officer and Chief Financial Officer during the past year, information on loans and other borrowings (including the repaid ones) received from the Bank by their affiliates, including size, interest rates and maturity, data concerning persons having significant interest in the Bank, i.e. their names (legal names), size of interest in the Bank (with the exception of persons with indirect significant interest, who do not have any equity interest (stocks or shares) in the Bank's charter capital), information on loans and other borrowings (including the repaid ones) received from the Bank by them and their affiliates during the past year, including size, interest rates and maturity;

c) information regarding large-scale transactions concluded between the Bank and its related persons, as well as transactions that have been concluded during two years preceding the date of request for receiving such information and relate to acceptance of call and time deposits by the Bank or extension of commercial and consumer loans, including mortgage loans, carrying out financing of debt or commercial transactions and factoring, issuance of bank guarantees and letters of credit, purchase, sale and management of bank (standardized) bullions of precious metals and coins, purchase and sale (exchange) of foreign currency, including conclusion of future, option and other transactions in drams and foreign currency and effecting financial leasing;

Ֆինանսական վարձակալություն (լիզինգ) իրականացնելու հետ.

դ) բանկի կողմից բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները).

զ) բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած բանկի ներքին ակտերի, բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի և խորհրդի ու տնօրինության նիստերի արձանագրությունների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի և (կամ) բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի բաժնի ղեկավարի կողմից խորհրդին, տնօրինությանը և գլխավոր գործադիր տնօրենին ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2% և ավելին տիրապետող յուրաքանչյուր մասնակցի (մասնակիցների) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները՝ պահանջը ստանալու պահից 7 (յոթ) - օրյա ժամկետում՝ գլխավոր գործադիր տնօրենի կողմից կնքված փակ ծրարով՝ պահանջում նշված հասցեով:

5.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը իրավունք ունեն առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկվելու Բանկի խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

5.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ մինչև 10 տոկոս ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերին տիրապետող բաժնետերերը կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 ու ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկվել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում, եթե տվյալ բաժնետերերը բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագիր են կնքել և այդ պայմանագրի մասին տեղեկացրել ընդհանուր ժողովին: Ընդ որում, պայմանագրի պատճենները տրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Սույն կետով նախատեսված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները՝

ա) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված

d) information on liabilities assumed by the Bank with respect to the Bank related person;

e) information about existence of contracts concluded by the Bank aimed at creation of groups of participants carrying out similar policy, as well as names (legal names) of the Bank participants who are parties to such contracts;

f) copies of the following: documents evidencing the Bank's title to property reflected in its balance sheet; the Bank's internal acts approved by the General Meeting and other management bodies; charters of the Bank's separated subdivisions and establishments; financial statements and statistical reports submitted by the Bank to government authorities; minutes of the General Meetings and meetings of the Bank Board and the Management Committee; conclusions on examinations conducted by the RA Central Bank; RA Central Bank decisions on punitive measures applied to the Bank and/or its managers; reports submitted by the Head of internal audit department to the Board, the Management Committee and the Chief Executive Officer;

g) list of legal entities in whose charter capital the Bank managers or their affiliates hold 20% or more participation or have an ability to influence their decisions.

At the request of each participant (participants) possessing 2% and more of the Bank's outstanding voting shares the Bank shall provide free of charge the information stipulated by the RA legislation within 7 (seven) days' period since the date of receiving the request at the address specified therein, in a closed envelope sealed by the Chief Executive Officer.

5.5. The Shareholders, who as of the date of compiling the list of Shareholders entitled to participate in the General Meeting possess 10 percent and more of the Bank's outstanding voting shares, may be included in the Bank Board without election by the General Meeting, or appoint their representatives therein.

5.6. The Shareholders, who as of the date of compiling the list of Shareholders entitled to participate in the General Meeting possess up to 10 percent of the Bank's outstanding voting shares, may join in a group to achieve 10 percent and more ownership of the Bank's outstanding voting shares, in which case they may appoint their representative in the Bank Board without election by the General Meeting, provided that such Shareholders have concluded a contract on creation of a Shareholders' group and have notified the General Meeting about it. Copies of the contract shall be delivered to all participants of the Meeting at least 30 days prior to the date of the General Meeting or, in case of voting in absentia, prior to the last date fixed for acceptance of completed ballots by the Bank. The contract specified in this paragraph shall contain the following conditions and information:

a) data concerning the Bank's Shareholders who join to form a group, including the number of the Bank's outstanding voting shares possessed by them;

քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները.

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ.

5.7. Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն (սույն կետի իմաստով ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող բաժնետերերը) իրավունք ունեն առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության իրենց շահերը ներկայացնող միասնական ներկայացուցչին ընդգրկել Բանկի խորհրդի կազմում, եթե տվյալ բաժնետերերը չեն կնքել սույն կանոնադրության 5.6 կետով նախատեսված միավորման պայմանագիր: Ընդ որում, սույն կետով նախատեսված միասնական ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ:

5.8. Բանկի բաժնետերերը կրում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

6. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

6.1. Բանկը չունի հայտարարված սովորական կամ արտոնյալ բաժնետոմսեր:

6.2. Բանկը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 (քսանհինգ) տոկոսը:

6.3. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

6.4. Բանկի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերին հաստատագրված շահութաբաժինների վճարումներ չեն երաշխավորվում:

6.5. Բանկի կողմից թողարկած հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

6.6. Բանկն իրավունք ունի տեղաբաշխել հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր:

6.7. Բանկի որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս պետք է ունենա միևնույն անվանական արժեքը:

6.8. Բանկի թողարկած միևնույն տեսակի արժեթղթերը պետք է ունենան թողարկման միևնույն ձևը և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման նույն համարը:

6.9. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում, բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

6.10. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել օրենքով նախատեսված այլ արժեթղթեր:

6.11. Բանկի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին երաշխավորվում է շահութաբաժիններ ստանալ բաժնետոմսերի անվանական արժեքից որոշված տոկոսներով՝ անկախ Բանկի գործունեության արդյունքներից, ինչպես և մյուս բաժնետերերի նկատմամբ նախապատվության իրավունքով ստանալ Բանկի լուծարումից հետո մնացած գույքի

b) information stipulated by the RA legislation concerning the person nominated by the joining Shareholders to be included in the Board;

c) a condition specifying that the contract is being concluded for a term of at least one year and may not be altered or terminated prior to its expiry;

d) other conditions at the discretion of the joining Shareholders.

5.7. Shareholders with minor participation (within the meaning of this Paragraph - the Shareholders possessing less than 10 percent of the Bank's outstanding voting shares) may, without election by the General Meeting, include in the Bank Board the common representative of their interests, if such Shareholders have not concluded the contract of joining specified in paragraph 5.6. of this Charter. Only the Shareholders with minor interest who attend the General Meeting may participate in the election of the common representative referred to in this paragraph, even if their number is one.

5.8. The Bank Shareholders may have other obligations envisaged by the RA legislation and this Charter.

6. SHARES AND OTHER SECURITIES

6.1. The Bank does not have declared ordinary or preferred shares.

6.2. The Bank may issue ordinary (common) shares, as well as one or more types of preferred shares. The total par value of preferred shares issued by the Bank shall not exceed 25% (twenty-five percent) of the Bank charter capital.

6.3. The Bank Shareholders' Register shall be maintained by the RA Central Depository.

6.4. The Bank does not guarantee the payment of fixed dividends to holders of ordinary shares.

6.5. The par value of ordinary (common) shares issued by the Bank shall be identical.

6.6. The Bank is entitled to allocate preferred shares with fixed and variable dividends, as well as cumulative and convertible preferred shares.

6.7. All preferred shares of a certain type shall have identical par value.

6.8. Securities of the same type issued by the Bank shall have identical form of issuance and the same state registration number assigned according to the procedure established by the RA Law "On Securities Market".

6.9. The Bank may issue and allocate nominal shares and bonds of materialized (prepared in printed form) or dematerialized form. Materialized form of shares issuance is the certificate of shares.

6.10. The Bank may issue and allocate other securities as defined by the Law.

6.11. The Bank guarantees that owners of preferred shares shall receive fixed dividends at interest based on par value of their shares, irrespective of the Bank activity results, and in case of the Bank liquidation they shall also receive by priority right a part of the Bank's property remaining after its liquidation. The holders of preferred shares shall enjoy other rights envisaged by

մասը և նման բաժնետոմսերի թողարկման պայմաններով նախատեսված այլ իրավունքներ:

6.12. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը բաժնետերերի ժողովներում չունեն ձայնի իրավունք՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

7. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

7.1. Բանկի բաժնետերերի համար ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն չափ չի սահմանվում: Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

7.2. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Սույն կետով սահմանված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ դրա չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կետով նախատեսված կարգով, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

7.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի և (կամ) փոխկապակցված անձանց մասնակցությունը բանկի կանոնադրական հիմնադրամում կզերազանցի համապատասխանաբար 10, 20, 50 և 75 տոկոսը:

7.4. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք բերել միայն ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Սույն կետի իմաստով բանկի կանոնադրական հիմնադրամում այլ (ոչ նշանակալից) մասնակցություն է հանդիսանում այն մասնակցությունը, որն անձը կամ փոխկապակցված անձինք ձեռք են բերում բանկի նշանակալից մասնակցից, որի արդյունքում Բանկի նշանակալից մասնակցի մասնակցությունը Բանկում նվազում է: ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձի մասնակցության չափը Բանկի կանոնադրական հիմնադրամում կնվազի համապատասխանաբար 75, 50, 25 կամ 10 տոկոսից:

8. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Եթե բաժնետերերից մեկն իր բաժնետոմսերի օտարման մտադրություն ունենա, նա («օտարողը») պետք է ստանա երրորդ անձի կողմից իր բաժնետոմսերը գնելու բարեխիղճ գրավոր առաջարկ: Նման դեպքում օտարողը պետք է նախապես մյուս բաժնետերերին կատարի այդ բաժնետոմսերը գնելու առաջարկ՝ ձեռք բերողի կողմից առաջարկված նույն

conditions of such shares' issuance.

6.12. The owners of preferred shares are not entitled to vote at the Bank Shareholders' General Meeting, other than cases provided for by the legislation.

7. RESTRICTIONS ON ACQUISITION OF SHARES

7.1. There shall be no limitation for the maximum amount of voting shares which can be owned by the Bank's shareholders. A person or affiliated persons may, according to the procedure established by the RA legislation and upon prior consent of the RA Central Bank, acquire significant participation in the Bank's charter capital as a result of one or several transactions.

7.2. Natural persons having permanent residence or conducting business in offshore zones, as well as legal entities established and registered in such areas, persons without the status of legal entity and their affiliates may as a result of one or several transactions acquire participation in the Bank's charter capital (regardless of the interest size) exclusively according to the procedure established by the RA legislation and upon prior consent of the RA Central Bank.

Legal entities created with participation of persons referred to in this paragraph or their affiliates may acquire interest in the Bank's charter capital (regardless of the interest size) exclusively according to the procedure defined herein and upon prior consent of the Central Bank.

7.3. RA Central Bank's consent, in accordance with the procedure defined by the RA legislation, is required for execution of each new transaction or transactions, as a result of which a person's or his/its affiliated persons' interest in the Bank's charter capital will exceed 10, 20, 50 and 75 percent, respectively.

7.4. A person or affiliated persons may acquire other (non-significant) interest in the Bank's charter capital as a result of one or several transactions only upon the prior consent of the RA Central Bank. Within the meaning of this paragraph, other (non-significant) interest in the Bank's charter capital shall mean such interest that is acquired by a person or affiliated persons from a significant participant of the Bank, as a result of which the interest of the Bank's significant participant is reduced. RA Central Bank's prior consent is required for execution of each transaction or transactions, as a result of which the size of the significant participant's interest in the Bank's charter capital will be reduced below 75, 50, 20 and 10 percent, respectively.

8. PROCEDURES ON ALIENATION OF SHARES

8.1. If one of the shareholders ("offeror") intends to transfer its shares it must solicit and receive a bona fide written offer from a third party to buy all or a portion of the offeror's shares. The offeror shall then offer such shares to the other shareholders on the same terms and conditions as the offer of the proposed transferee. The offeror shall give notice to the other

պայմաններով: Օտարողը ծանուցում կուղարկի մյուս բաժնետերերին (պատճենը՝ Բանկին)՝ հայտնելով առաջարկվող բաժնետոմսերի քանակությունը, նախատեսվող ձեռք բերողի անձը, օտարման նախատեսված պայմանները, ներառյալ՝ մեկ բաժնետոմսի գինը, ինչպես նաև բաժնետոմսերի ձեռքբերման վերջնաժամկետը և կցելով նախատեսվող ձեռք բերողի գրավոր առաջարկի պատճենը:

8.2. Բաժնետերերն իրավունք կունենան առաջարկն ստանալուց 30 օրվա ընթացքում ձեռք բերել առաջարկված բաժնետոմսերը՝ առաջարկի օրվա դրությամբ իրենց ունեցած բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

8.3. Եթե օտարողը սկզբնական առաջարկի օրվանից 30 օրվա ընթացքում չի ստանում բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն կամ ստանում է ոչ բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն, նա կառաջարկի մնացած բաժնետոմսերը բաժնետոմսերի ձեռքբերման մտադրություն հայտնած բաժնետերերին՝ տալով նրանց երկրորդ ծանուցում (պատճենը՝ Բանկին) և դրանում նշելով մնացած բաժնետոմսերի քանակը:

8.4. Բաժնետերերը 20 օրվա ընթացքում իրավունք կունենան ձեռք բերել մնացած բաժնետոմսերը՝ երկրորդ ծանուցումն ստանալու օրվա դրությամբ իրենց ունեցած բաժնետոմսերի քանակությանը համամասնորեն:

8.5. Երկրորդ ծանուցման օրից 20 օրվա ընթացքում բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն չստանալու կամ ոչ բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն ստանալու դեպքում օտարողը մնացած բաժնետոմսերը կառաջարկի Բանկին՝ տալով վերջինիս երրորդ ծանուցում և դրանում նշելով մնացած առաջարկվող բաժնետոմսերի քանակը: Բանկն իրավունք կունենա երրորդ ծանուցման օրից 20 օրվա ընթացքում ձեռք բերել մնացած բաժնետոմսերը բացառապես օրենքով սահմանված դեպքում:

8.6. Մնացած առաջարկվող բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն չստանալու կամ ոչ բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համաձայնություն ստանալու դեպքում օտարողն իրավունք կունենա ի սկզբանե առաջարկված բոլոր բաժնետոմսերը վաճառել նախատեսված ձեռք բերողին Բանկի կողմից բաժնետոմսերն ընդունելու սահմանված ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում՝ սկզբնական առաջարկի պայմաններով:

8.7. Բանկի բաժնետոմսերի օտարումը պետք է կատարվի բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒԹԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

9.2. Միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

shareholders (with a copy to the Bank) setting forth the number of shares being offered, the identity of the proposed transferee, the terms and conditions of the sale as provided in the offer of the proposed transferee including the price per Share, the closing date for the purchase of the shares, and attaching a copy of the written offer from the proposed transferee.

8.2. The Shareholders shall be entitled within 30 days of the offer to purchase the offered shares pro rata to their shareholdings as at the date of the offer.

8.3. If the offeror does not receive an acceptance or receives acceptance for the purchase of some but not all of the offered shares within 30 days of the initial offer it shall offer the remaining offered shares to the shareholders that accepted the initial offer. The offeror shall give a second notice to the accepting offerees (with a copy to the Bank) setting forth the number of remaining offered shares.

8.4. The Shareholders shall be entitled within 20 days to purchase remaining offered shares pro rata to their shareholdings as at the date of the second offer notice.

8.5. If the offeror does not receive an acceptance or receives acceptance for the purchase of some but not all of the remaining offered shares within 20 days of the second offer it shall offer the remaining offered shares to the Bank. The offeror shall give the third offer notice to the Bank, setting forth the number of remaining offered shares. The Bank will be entitled within 20 days of the third offer to purchase the remaining offered shares only in cases envisaged by the law.

8.6. If the offeror does not receive any acceptance or receives acceptance for purchase of some but not all of the remaining offered shares the offeror may sell the initially offered shares to the proposed transferee on the terms and conditions of the original offer of the proposed transferee for a period of 90 days from the due date of acceptance by the Bank.

8.7. Alienation of the Bank shares shall be exercised exclusively according to the procedure established by the RA legislation.

9. PROCEDURE FOR THE BANK DIVIDENDS PAYMENT

9.1. The Bank is entitled to take a decision (declare) on payment of quarterly, semi-annual or annual dividends to its Shareholders.

9.2. The decision on payment of interim (quarterly and semi-annual) dividends, their size and form of payment shall be taken by the Bank Board. The decision on payment of annual dividends, their size and form of payment shall be taken by Bank Shareholders' General Meeting, upon representation by the Bank Board. The size of interim dividends may not exceed 50% of dividends distributed on the basis of the previous financial year results. The size of annual dividends may not be less than that of already paid interim dividends. If by the General Meeting decision the size of annual dividends is fixed in an amount equal to already paid interim dividends, then no annual dividends shall be paid to the Bank Shareholders.

Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու մասին:

9.3. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

9.4. Շահութաբաժիններ հայտարարելը և բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը և Բանկը ոչ մի դեպքում իրավունք չունի հայտարարել կամ վճարել հարկումից հետո մնացած զուտ շահույթը գերազանցող շահութաբաժիններ:

9.5. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևով արգելվում է, բացառությամբ սույն կանոնադրության 9.6 կետով նախատեսված դեպքերի:

9.6. Բանկի ձայնի իրավունք սովոր բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետզնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկից իրենց մասնակցության հետզնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների՝ սույն կետի առաջին մասում նշված սահմանափակմանը:

Բանկի կողմից մասնակցության հետզնումը կատարվում է դրա

If by the General Meeting decision the size of annual dividends is fixed in an amount exceeding already paid interim dividends, then annual dividends shall be paid in an amount equal to the difference between fixed annual dividends and interim dividends already paid during the given year.

The General Meeting may take a decision on non-payment of dividends.

9.3. Annual dividends payment term is fixed by the General Meeting decision on payment of dividends. Interim dividends payment term is fixed by the Bank Board decision on payment of interim dividends, which, however, may not be earlier than 30 days after adoption of such a decision. For each payment of dividends the Board shall compile the list of Shareholders entitled to such dividends, which shall include the following information:

a) in case of interim dividends payment – names of Shareholders included in the Bank Shareholders' Register at least 10 days prior to the date when the decision on interim dividends payment was taken by the Board;

b) in case of annual dividends payment – names of Shareholders included in the Bank Shareholders' Register as of the date of compiling the list of Shareholders entitled to participate in the General Meeting.

9.4. Declaration or payment of dividends to the Bank Shareholders is forbidden, if at the time of distribution the losses (damages) sustained by the Bank are equal or exceed the amount of the Bank's non-distributed net profit, and in no event the Bank may declare or pay dividends exceeding its net profit after tax.

9.5. Reduction in the course of the Bank activities of its actually paid up charter capital for the purpose of dividends payment or for other purposes is prohibited, with the exception of cases envisaged by paragraph 9.6. of this Charter.

9.6. Owners of the Bank's voting shares are entitled to demand from the Bank taking a decision on repurchase price of their share and repurchasing all or a part of shares belonging to them, if:

a) a decision on the Bank reorganization, suspension of pre-emptive right or conclusion of a large-scale transaction has been adopted, and such Shareholders have voted against the Bank reorganization, suspension of pre-emptive right or conclusion of a large-scale transaction, or have not participated in voting with respect to those matters;

b) amendments or alterations have been introduced to the Bank Charter, or the Charter has been approved in new wording, as a result of which such Shareholders' rights have been restricted, provided that they have voted against those decisions or have not participated in the voting.

The list of Shareholders entitled to demand from the Bank the repurchase of their share shall be prepared on the basis of data contained in the Bank Shareholders' Register as of the date of compiling the list of Shareholders who were entitled to participate in such General Meeting that included in its agenda issues, the approval of which resulted in the restriction of the Shareholders' rights referred to in the first part of this paragraph.

The repurchase of share by the Bank shall be effected

շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետզնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում:

9.6.1. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին:

Ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի առաջացմանը, պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ և սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետզնման գնի մասին, եթե վերջինս սահմանված կարգով մինչ այդ որոշված է:

Նշված որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել հետզնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց մոտ Բանկից բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի առաջացման և հետզնման կարգի մասին:

Բաժնետիրոջ՝ իրեն պատկանող բաժնետոմսերը հետզնելու մասին գրավոր պահանջը, որը պարունակում է տեղեկություններ հետզնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է բանկին՝ ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

Սույն կետի չորրորդ պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետզնել բաժնետոմսերը՝ հետզնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից:

9.7. Մասնակցության հետզնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը, եթե՝

ա) մասնակցության հետզնման դեպքում Բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի պահանջները.

բ) կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները.

գ) բաժնետոմսերի հետզնումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը:

9.8. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

10. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1. Բանկի կառավարման մարմիններն են.

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը.
- Բանկի խորհուրդը.
- Բանկի տնօրինությունը.
- Բանկի գլխավոր գործադիր տնօրենը:

at its market value, which will be determined without consideration of changes arising in the consequence of the share assessment and the Bank's actions having caused the exercise of the right to demand repurchase of share.

The Bank's charter capital may also be reduced in cases envisaged by the RA Law "On Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies and Insurance Companies".

9.6.1. The Bank is obliged to inform the Shareholders about the right to demand repurchase of shares belonging to them and the procedure of its exercising.

The notice of the Meeting, the agenda of which includes such matters which, when voted upon, may in the manner prescribed by the RA legislation give rise to origination of the right to demand repurchase of shares, shall contain the information stipulated by the RA legislation and the first paragraph hereof. The notice shall also contain information on the shares repurchase price, if the latter has been determined in due manner by that time.

Within 7 days' period after adoption of the stated decisions the Bank shall inform the Shareholders having the right of repurchase about origination of their right of demanding from the Bank to repurchase their shares, and the procedure of repurchase.

The written request of a Shareholder on repurchase of shares belonging to him, which contains information on the number of shares offered for repurchase and the Shareholder's place of residence (location), shall be submitted to the Bank not later than within 45 days after adoption of relevant decisions by the General Meeting.

Upon expiry of the term specified in the fourth part of this paragraph the Bank shall within 30 days repurchase the shares from Shareholders having submitted the written request on repurchase.

9.7. For share repurchase the approval of the RA Central Bank Board shall be required. The Central Bank may refuse to give such an approval, if:

a) as a result of the share repurchase the Bank will be unable to satisfy its creditors' claims;

b) the Bank will violate prudential economic standards;

c) repurchase of shares will lead to destabilization of the banking system of the Republic of Armenia.

9.8. In case of shares repurchase by the Bank, the decision on the charter capital reduction or realization of given shares shall be taken at the General Meeting by 3/4 votes of holders of voting shares attending the Meeting, but not less than by 2/3 votes of holders of voting shares.

10. THE MANAGEMENT BODIES OF THE BANK

10.1. The management bodies of the Bank are:

- the Shareholders' General Meeting;
- the Bank Board;
- the Management Committee of the Bank;
- the Chief Executive Officer of the Bank.

11. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

11.2. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) Բանկի ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

ժբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

ժգ) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

ժդ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

ժե) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

ժզ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժէ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժը) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր.

ժթ) «Օրենսդրությամբ նախատեսված՝ սույն կանոնադրությամբ կառավարման այլ մարմիններին չվերապահված հարցերով որոշումների ընդունումը:

11.3. Սույն կանոնադրության 11.2 կետով նախատեսված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, ինչպես նաև տնօրինությանը, գլխավոր գործադիր տնօրենին, նրա տեղակալներին, Բանկի գլխավոր ֆինանսական տնօրենին կամ այլ անձի, բացառությամբ ժբ-ժզ կետերում թվարկված հարցերի և Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման հարցի, որոնցով որոշումների

11. THE GENERAL MEETING OF SHAREHOLDERS, POWERS OF THE GENERAL MEETING

11.1. The supreme management body of the Bank is the Bank Shareholders' General Meeting.

11.2. Within the competence of the Bank Shareholders' General Meeting fall the following issues:

a) approval of the Bank Charter, making alterations and amendments to it, approval of the Charter in new edition;

b) reorganization of the Bank;

c) liquidation of the Bank;

d) approval of summary, interim and liquidation balance sheets of the Bank, appointment of liquidation commission;

e) approval of the Board members' number, their election and premature termination of their powers. Matters relating to approval of the Board members' number and their election shall be considered exclusively at annual General Meetings. The matter of the Board members' election may be considered at extraordinary General Meeting, if the latter has passed a decision on premature termination of the Board's or its certain members' powers;

f) determination of maximum size of declared shares' volume, as well as increase of the Bank's charter capital;

g) upon representation by the Board, approval of the person who will carry out the Bank's external audit;

h) approval of the Bank's annual financial statements, profit and loss distribution; taking decision on annual dividends payment and approval of annual dividends size;

i) approval of the procedure for holding the Shareholders' General Meetings;

j) formation of the counting board;

k) consolidation and splitting of shares;

l) creation of subsidiaries and dependent companies;

m) participation in subsidiaries and dependent companies;

n) establishment of associations of commercial organizations;

o) participation in associations of commercial organizations;

p) determination of the size of remuneration for the Board members;

q) in cases envisaged by the law, taking decision on not exercising the preemptive right of shares acquisition;

r) within the limits of approved agenda other issues envisaged by the law;

s) taking decisions on issues envisaged by the RA legislation which are not delegated to other governing bodies.

11.3. Matters referred to in paragraph 11.2. of this Charter fall within the exclusive competence of the General Meeting and may not be transferred for resolution to the Bank Board, the Management Committee, the Chief Executive Officer, his deputies, the Chief Financial Officer or another person, except for those specified in subparagraphs from l) through p) and the matter regarding the Bank's charter capital increase, which may be transferred for resolution to the

ընդունումը ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի խորհրդին:

11.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բանկի մասնակիցների անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

բ) բանկի մասնակից չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

գ) բանկի ներքին աուդիտի բաժնի անդամները՝ որպես դիտորդ:

դ) բանկի արտաքին աուդիտին իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում):

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

զ) Բանկի խորհրդի որոշմամբ նախատեսված այլ անձինք:

Բանկի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել բաժնետերերի համատեղ ներկայությամբ ժողով գումարելու միջոցով, ինչպես նաև հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա կարգով քվեարկության միջոցով գումարվող արտահերթ ընդհանուր ժողովը չի կարող որոշումներ ընդունել սույն կանոնադրության 11.2 կետի բ), գ) և ը) կետերում նշված հարցերի վերաբերյալ:

Սույն կանոնադրության 11.2 կետի «ա», «բ», «դ», «զ» ենթակետերում թվարկված, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված այլ հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Մնացած հարցերով ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ:

11.5. Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

11.5.1. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Խարհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բանկի մասնակցի կողմից խախտվել է սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված ժամկետ,

բ) առաջարկ ներկայացրած բանկի մասնակիցը (մասնակիցները) չի (չեն) տնօրինում Բանկի՝ սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին,

գ) լրիվ չեն կամ բացակայում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրության 11.5 կետով սահմանված տվյալները,

Bank Board based on the General Meeting decision.

11.4. The following persons have the right to participate in the Bank's General Meeting:

a) the Bank Shareholders possessing common (ordinary) shares of the Bank – with the number of votes belonging to them, as well as nominal holders of shares, if they submit documents confirming names (legal names) of Shareholders represented by them and the number of votes held by such Shareholders;

b) members of the Bank Board and Executive body who are not Shareholders of the Bank – by consultative vote;

c) the Bank's internal audit department members - as observers;

d) the person carrying out the Bank's external audit - as observer (if his conclusion is included in the issues of the General Meeting agenda);

d) the Central Bank representatives - as observers;

e) other persons envisaged by the Bank Board decision.

Decisions of the Bank's General Meeting may be passed at a sitting held through the shareholders' joint participation, as well as through voting in absentia (by inquiry). Extraordinary General Meeting held by voting in absentia may not pass decisions on matters specified in subparagraphs b), c) and h) of paragraph 11.2.

Decisions on matters listed in subparagraphs "a", "b", "d", "f", as well as directly stipulated by the RA legislation shall be taken at the Meeting by 3/4 votes of holders of voting shares attending the Meeting.

Decisions on other matters shall be taken by a simple majority of votes of holders of voting shares attending the Meeting, unless otherwise stipulated by the RA legislation and this Charter.

11.5. Proposals concerning the agenda of annual General Meeting shall be submitted in writing, specifying the grounds for proposed matter, name (legal name) of the Shareholder (Shareholders) proposing the matter for inclusion in the agenda, the number of votes belonging to him (them) according to their types and classes, as well as the signature of the author (authors) of the proposal or their facsimile reproduction.

11.5.1. Within 15 days after expiry of the term indicated in subparagraph (g) of paragraph 5.3. hereof the Board shall consider submitted proposals and take a decision on their inclusion in the annual General Meeting agenda or reject their inclusion. The Board may take a decision of rejecting the inclusion of submitted proposals in the General Meeting agenda only in case when:

a) the Bank participant having submitted the proposal has violated the term specified in subparagraph (g) of paragraph 5.3. hereof;

b) the Bank participant(s) having submitted the proposal does not possess the number of votes specified in subparagraph (g) of paragraph 5.3. hereof;

c) data stipulated by the RA legislation or paragraph 11.5. of this Charter are not complete or are missing;

դ) առաջարկը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

11.5.2. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բանկի մասնակցին՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

11.6. Ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում նաև արտահերթ ժողով գումարելու իրավունք ունեցող անձինք որոշում են՝

ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

բ) ժողովի օրակարգը,

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

դ) ժողովի գումարման մասին Բանկի մասնակիցներին ծանուցելու կարգը,

ե) Բանկի մասնակիցներին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

11.6.1. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա:

11.6.2. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

11.6.3. Բանկն իր մասնակիցների ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

11.6.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթիվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսը:

11.6.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրաան հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

11.6.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի մասնակիցների խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

11.6.7. Բանկի խորհուրդը Ընդհանուր ժողովին առաջարկություններ ներկայացնում է գրավոր՝ Բանկին խորհրդի նախագահի միջոցով: Բանկի խորհրդի կողմից Ընդհանուր ժողովին ներկայացվող առաջարկությունների վերջնական ցանկը հաստատվում է Խորհրդի նիստում, որի գումարումից հետո առավելագույնը հնգօրյա ժամկետում Խորհրդի նախագահը Ընդհանուր ժողովի առաջիկա նիստին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին՝ ըստ Խորհրդին հայտնի բաժնետերերի վերջին բնակության (գտնվելու) վայրի հասցեների, ուղարկում է

d) the proposal is incompliant with the requirements defined by the RA legislation and other legal acts.

11.5.2. The Board's substantiated decision on rejecting the inclusion of submitted proposal in the annual Meeting agenda shall be delivered to the Bank participant having submitted the proposal during 3 days since the moment of adopting the decision.

11.6. During preparation of the Meeting the Board, and in cases stipulated by the RA legislation – also the persons entitled to convene an extraordinary Meeting, shall determine:

a) year, month, date, time and place of convocation;

b) the Meeting agenda;

c) year, month and date of compiling the list of Bank participants entitled to participate in the Meeting;

d) procedure for notifying the Bank participants about the Meeting convocation;

e) list of information and materials to be delivered to the Bank participants during the Meeting preparation;

f) form and content of ballots, if voting is carried out by ballots.

11.6.1. The list of shareholders entitled to participate in the General Meeting is compiled on the basis of data contained in the Shareholders Register as of the date, month and year specified by the Board.

11.6.2. The date of compiling the list of shareholders entitled to participate in the General Meeting may not be earlier than the date when the decision on the General Meeting convocation is taken, and later than 45 days prior to the date of convening the General Meeting.

11.6.3. The Bank shall notify the Central Bank about convocation of its participants' General Meeting at least 15 days prior to the date of the Meeting.

11.6.4. For compiling the list of shareholders entitled to participate in the General Meeting the nominal holder of shares shall as of the date, month and year of compiling the list submit data concerning such shareholders whose shares are disposed by him with the purpose of representing their interests.

11.6.5. The list of the Bank participants entitled to participate in the General Meeting shall contain data on the name (legal name), location (place of residence) of each participant and interest held by him/it in the Bank's Statutory Fund according to types and classes of shares.

11.6.6. The list of shareholders entitled to participate in the General Meeting may be amended only for correction of errors made in the course of compiling the list or restoration of violated rights and legitimate interests of the Bank shareholders not included in the list.

11.6.7. The Bank Board shall submit proposals to the General Meeting in writing, through the Bank Board Chairman. The final list of proposals submitted by the Bank Board to the General Meeting shall be approved at the Board meeting, and within 5 days' period after holding the meeting the Board Chairman shall send the final list of proposals to the Shareholders entitled to participate in the Meeting, at their last addresses of residence (location) known to the Board, with accompanying letter on their inclusion in the agenda of the forthcoming General Meeting.

առաջարկությունների վերջնական ցանկը՝ դրանք Ընդհանուր ժողովի առաջիկա օրակարգում ընդգրկելու մասին ուղեկցող գրությամբ:

11.7. Բանկի բաժնետերերի համատեղ ներկայությամբ ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

11.8. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում ընդհանուր ժողովի օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Ընդ որում՝ չկայացած ժողովի փոխարեն նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին: Բանկի բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

11.9. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է լինել տարեկան կամ արտահերթ: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Տարեկան ժողովից բացի գումարվող բաժնետերերի մնացած ժողովները համարվում են արտահերթ:

11.10. Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գործադիր մարմնի, ներքին աուդիտի բաժնի ղեկավարի, արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ Բանկի՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով: Ընդ որում, խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կանոնադրության սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացված պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

11.11. Խորհրդի նախաձեռնությամբ, կամ սույն կանոնադրության 11.10 կետով նախատեսված ժողով գումարելու պահանջի դեպքում, եթե չկա ժողովի գումարման ձևի մասին ցուցում, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը սահմանում է Բանկի խորհրդը:

11.12. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Իրական ժամանակի ռեժիմում ընդհանուր ժողովի նիստն անցկացվում է այնպես, որ ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցները հնարավորություն ունենան միաժամանակ հաղորդակցվելու միմյանց հետ, ընկալելու ընդհանուր ժողովին մասնակցող անձանց արտահայտած կարծիքները, առաջադրած հարցադրումները, արտահայտելու դրանց վերաբերյալ իրենց կարծիքները և քվեարկելու առաջադրված հարցերի շուրջ: Հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացված նիստում քվեարկությունն իրականացվում է անվանական քվեարկությամբ՝ ժողովը նախագահողի կողմից ժողովին մասնակցող բաժնետերերից կատարված անվանական հարցման միջոցով:

11.7. The Bank Shareholders' General Meeting shall be eligible (quorum present), if upon completion of the Meeting participants' registration the Shareholders (or their representatives) possessing more than 50% of the Bank's voting shares have been registered.

11.8. In case of absence of quorum, the year, month and date of calling a new Meeting shall be announced. In the event of convocation of a new meeting the agenda of the General Meeting may not be changed. The new meeting called instead of the adjourned meeting shall be eligible, if upon completion of the Meeting participants' registration the Shareholders (or their representatives) possessing more than 30% of the Bank's voting shares have been registered. Notice to the Bank Shareholders on calling a new meeting shall be given at least 10 days prior to the date of its convocation.

11.9. The Shareholders' General Meetings may be ordinary and extraordinary. The annual General Meeting may not be held by voting in absentia (by inquiry). The Bank Shareholders' General Meeting is convened no later than within 6 months after completion of the Bank's fiscal year. All meetings called in addition to the annual General Meetings shall be extraordinary.

11.10. The Bank Shareholders' extraordinary General Meetings are called by the decision of the Bank Board – at its own initiative, or at the request of the Bank's executive body, Head of internal audit department, the person carrying out external audit or a Shareholder(s) possessing at least 10% of the Bank's voting shares at the time of making such a request. The Board may not take a decision on changing the form of holding the meeting, if the request on calling an extraordinary meeting, as specified herein, contains an instruction about the form of holding the meeting.

11.11. If the extraordinary General Meeting is called at the Board's initiative, or the request referred to in paragraph 11.10. on calling an extraordinary meeting does not contain any instruction on the form of holding the meeting, then the form of holding the extraordinary General Meeting shall be determined by the Bank Board.

11.12. The General Meeting decisions may be adopted at such a sitting, during which the General Meeting participants may communicate with each other in real time mode__by telephone, television communication or other means of communication. Such sitting shall not be considered as being held by voting in absentia (by inquiry). The General Meeting held in real time mode shall be conducted in such a manner as to enable all participants of the Meeting to communicate with each other simultaneously, perceive the opinions expressed by the Meeting participants, issues raised at the Meeting, express their opinions and vote on such issues. Voting at a sitting held in real time mode via telephone, television communication or other means of communication is carried out by nominal voting through inquiries addressed by the Meeting Chairman to the attending Shareholders.

11.13. Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

11.14. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին: Հարցման միջոցով քվեարկությունը, ինչպես նաև քվեաթերթիկների հաշվառումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.15. Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի կողմից որոշում ընդունելիս միաժամանակ սահմանվում են՝

- ա) քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը.
- բ) Բանկի բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը:

11.16. Քվեաթերթիկները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

- ա) բանկի անվանումը.
- բ) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը ամսաթիվը, ժամը և վայրը.
- գ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը.
- դ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»: Գումարային (կոմույատիվ) քվեարկության անցկացման դեպքում քվեաթերթիկը պետք նախատեսի քվեարկության կարգի առանձնահատկությունները.
- ե) լրացված քվեաթերթիկներն Բանկի կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- զ) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից: Ընդ որում, եթե քվեաթերթիկը ստորագրել է բաժնետիրոջ ներկայացուցիչը, ապա քվեաթերթիկի հետ տրվում է նաև համապատասխան լիազորագիր.
- է) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Խորհրդի, ինչպես նաև ներքին աուդիտի բաժնի անդամի ընտրության դեպքում քվեաթերթիկը, թեկնածուների անունից բացի, պետք է պարունակի նաև նրանց մասին անհատականացնող տվյալներ:

11.17. Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ: Այս պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, ապա նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:

11.18. Քվեարկության արդյունքներով Բանկի ընդհանուր ժողովի կողմից ստեղծված հաշվիչ հանձնաժողովը քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն, որը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:

11.19. Արձանագրությունը կազմելուց և այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զննում է հաշվիչ

11.13. If the General Meeting is held by way of voting in absentia, the year, month and date of compiling the list of Bank participants entitled to participate therein shall be determined at least 35 days prior to the date of the meeting.

11.14. The Meeting decision adopted by voting in absentia shall be valid, if more than a half of owners of the Bank's voting shares have participated in voting. Voting by inquiry, as well as registration of ballots shall be carried out in accordance with the procedure established by the RA legislation.

11.15. Upon taking decision on holding the extraordinary Meeting by way of voting in absentia, simultaneously are defined:

- a) the form and content of ballots;
- b) the year, month and date of providing to the Bank Shareholders the ballots, as well as information and materials to be delivered to the Shareholders;
- c) the year, month and date of acceptance by the Bank the ballots completed by the Bank Shareholders.

11.16. Ballots shall contain the following information:

- a) legal name of the Bank;
- b) year, month, date, time and place of calling the extraordinary General Meeting;
- c) formulation of each issue put to vote and order of its consideration;
- d) options of voting with respect to each matter put to vote: "for", "against", "abstained". Upon conducting cumulative voting, peculiarities of the voting procedure shall be taken into consideration in the ballots;
- e) year, month, date, hour and the place of acceptance of completed ballots by the Bank;
- f) an instruction indicating that the ballot must be signed by the Shareholder or his/its representative. If the ballot is signed by the Shareholder's representative, then a relevant power of attorney shall be produced together with the ballot.

g) explanation of the procedure for completing the ballot.

In case of election of a Board member or internal audit department member, the ballot shall contain, in addition to the nominee's name, identification data concerning him/her.

11.17. In case of voting by ballots, only those ballots shall be counted, where the voter has left only one voting option. The ballots completed with violation of the mentioned requirement shall be invalid and shall not be taken into consideration upon counting of votes. If the ballot contains more than one matter put to vote, the violation of the above-mentioned requirement with regard to one or several matters shall not invalidate the whole ballot.

11.18. The counting board shall draw up a protocol of voting results to be signed by all members of the counting board formed by the General Meeting .

11.19. The counting board, immediately after drawing up and signing the protocol, shall seal the ballots and

հանձնաժողովը և այն հանձնում Բանկի արխիվ՝ պահպանության համար:

11.20. Քվեարկության արդյունքները հայտատարվում են տվյալ ժողովում, եթե ժողովը գումարվել է բաժնետերերի ներկայությամբ և քվեարկությունները կատարվել են քվեաթերթիկներով, իսկ եթե ժողովը գումարվել է հեռակա քվեարկությամբ, ապա քվեարկության վերաբերյալ հաշվետվության հրապարակման կամ այն բաժնետերերին ուղարկելու միջոցով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում: Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Բանկի քվեարկությունների արդյունքների վերաբերյալ արձանագրություններին նրանց առաջին իսկ պահանջով:

11.21. Բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով կազմվում է ընդհանուր ժողովի արձանագրությունը, որը ստորագրում են ժողովի նախագահը և ժողովի քարտուղարը:

11.22. Բաժնետերերի ժողովի արձանագրության մեջ նշվում են՝

ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:

բ) Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը:

գ) ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը:

դ) ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), ժողովի օրակարգը:

11.23. Արձանագրությունը պետք է պարունակի ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները: Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ժողովի արձանագրություններին:

11.24. Ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները և նյութերը՝ պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում են առձեռն ժողովի նիստի անցկացման օրվանից առնվազն 30 օր առաջ: Ծանուցման այլ եղանակ կարող է սահմանվել ընդհանուր ժողովի որոշմամբ:

11.25. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնց ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի որոշմամբ:

11.26. Քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին հեռակա կարգով ժողովի անցկացման օրվանից առավելագույնը 30 օր առաջ, իսկ դրանք բաժնետերերի կողմից լրացված վիճակում ընդունվում են հեռակա կարգով ժողովի անցկացման օրվանից առավելագույնը 60 օր հետո:

11.27. Հեռակա կարգով անցկացված ժողովին մասնակցած բաժնետերերը պարտավոր են իրենց կողմից լրացված քվեաթերթիկները պատվիրված նամակով կամ անձամբ հանձնել Բանկին՝ մինչև սույն կանոնադրությամբ սահմանված քվեաթերթիկների ընդունման վերջնաժամկետի լրանալը:

11.28. Եթե հեռակա կարգով ժողովին մասնակցած բոլոր բաժնետերերի կողմից լրացրած քվեաթերթիկները ստացվել են մինչև դրանց ընդունման համար սահմանված վերջնաժամկետի լրանալը, ապա դրանք ենթակա են ամփոփման քվեարկությանը մասնակցող բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներից վերջինները ստանալու պահից 3-օրյա ժամկետում:

hand them over to the Bank archive for safe custody.

11.20. Voting results shall be announced at the given meeting, if it has been held in the Shareholders' presence and the voting has been conducted by ballots, and if the meeting has been held by voting in absentia, voting results shall be disclosed by means of publishing the report of voting or delivering it to the Shareholders in the manner and terms defined by the RA legislation, within 45 days since the moment of passing those decisions. The Shareholders are entitled to get familiarized with the Bank's minutes on results of the voting upon their first request.

11.21. Minutes of the General Meeting shall be drawn up within 5 days after the end of the Shareholders' General Meeting, in two copies, which shall be signed by the Chairman and Secretary of the Meeting.

11.22. Minutes of the General Meeting shall contain the following information:

a) year, month, date and the place of calling the meeting;

b) aggregate number of votes given by the Bank's outstanding voting shares;

c) aggregate number of votes belonging to the Shareholders having participated in the meeting;

d) the Chairman (presidium) and the Secretary (secretariat) of the meeting.

11.23. The Minutes shall contain the basic provision of speeches made at the meeting, issues put to vote, results of voting with regard to those matters and decisions passed at the meeting. The Bank Shareholders are entitled to get familiarized with minutes of the meeting.

11.24. In case of voting in absentia, together with ballots and the Meeting agenda, the information and materials stipulated by the RA legislation shall also be sent to all Shareholders entitled to participate in the Meeting. Such information and materials shall be sent through registered mail with notice of delivery or delivered in person at least 30 days prior to the date of the Meeting. The General Meeting may resolve on establishing another procedure for notification.

11.25. Voting in absentia is carried out by using of ballots that meet the requirements defined by the RA legislation, the form and content of which are approved by the Board decision.

11.26. The ballots shall be provided to Shareholders not later than 30 days prior to the date of the Meeting to be held by voting in absentia, and the votes completed by Shareholders shall be accepted not later than 60 days after the date of holding the Meeting.

11.27. Shareholders having participated in the Meeting held by voting in absentia shall deliver their completed ballots to the Bank, either by registered mail (with notice of delivery) or in person, before the deadline fixed for acceptance of ballots.

11.28. If the ballots completed by all Shareholders having participated in the Meeting held by voting in absentia have been received before the deadline fixed for their acceptance, they shall be subject to summarization within 3 days since the moment of receiving the last of the ballots completed by Shareholders.

12. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ, ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

12.1. Բանկի խորհուրդը Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնող կառավարման մարմինն է, որը գործում է ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով և սույն կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Բանկի խորհրդի քանակական կազմը սահմանվում է ընդհանուր ժողովի ժամանակ, որի ընթացքում ընտրվում է խորհուրդը: Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 7 անդամից:

12.2. Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում բանկի ներկա մասնակիցների կողմից, բացառությամբ սույն կանոնադրության 5.5, 5.6 և 5.7 կետերով նախատեսված դեպքերի, երբ խորհրդի անդամները առանց ընդհանուր ժողովի ընտրության, համապատասխան բաժնետիրոջ կամ բաժնետերերի կողմից նշանակվում են խորհրդի կազմում:

12.3. Եթե բաժնետերերը սույն կանոնադրության 5.5., 5.6. և 5.7 կետերով նախատեսված կարգով չեն օգտվում իրենց իրավունքից և խորհրդի կազմում չեն ընդգրկվում կամ չեն նշանակում իրենց ներկայացուցչին, ապա խորհրդի անդամներն ընտրվում են համապատասխան տարեկան ընդհանուր ժողովում, եթե նրանց քանակը քիչ է օրենքով սահմանված նվազագույն չափից:

12.4. Բանկի բաժնետերը կամ բաժնետերերը, որոնք համաձայն սույն կանոնադրության 5.5, 5.6 և 5.7 կետերի իրավունք ունեն ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին, կարող են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով իրենց կողմից նշանակված խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել և նշանակել նոր անդամ՝ գրավոր ծանուցելով Բանկի խորհրդին:

12.5. Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի): Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, նշվում է թեկնածուի անունը, նրա՝ Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող բանկի բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի, նրան առաջադրող բաժնետերերի անունները (անվանումները), վերջիններիս պատկանող բանկի բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի, ինչպես նաև այլ տեղեկություններ:

12.5.1. Յուրաքանչյուր անգամ տարեկան ժողովներում խորհրդի ձևավորման դեպքում խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ՝ տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար սահմանված կարգով:

12.5.2. Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ժողովը նույն նիստում ընտրում է խորհրդի նոր անդամ:

12.5.3. Եթե խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ժողովը նույն նիստում խորհրդի նոր անդամ չի ընտրում, ապա խորհրդի նոր անդամի թեկնածուի առաջադրումն իրականացվում է սույն կանոնադրության 12.5-12.5.4 կետերով սահմանված կարգով:

12.5.4. Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Բանկի մասնակիցներն իրենց

12. THE BANK BOARD, FORMATION OF THE BOARD

12.1. The Bank Board is the management body carrying out general administration of the Bank activities, which acts within the limits of competence attributed to the Board by the Law "On Banks and Banking" and this Charter. The quantitative composition of the Board shall be fixed at the General Meeting during which the Board is elected. The Board shall consist of minimum 5 and maximum 7 members.

12.2. The Bank Board members are elected at the Shareholders' annual General Meeting by attending participants, with the exception of cases envisaged by paragraphs 5.5., 5.6. and 5.7. of this Charter, when the Board members may without election be appointed in the Board by respective Shareholder or Shareholders.

12.3. If the Shareholders do not exercise their right in accordance with the procedure described in paragraphs 5.5., 5.6. and 5.7. of this Charter and do not include or appoint their representative in the Board, then the Board members are elected at respective annual General Meeting, if their number is less than the minimum number defined by the Law.

12.4. The Bank Shareholders, who according to paragraphs 5.5., 5.6. and 5.7. of this Charter are entitled to include or appoint their representative in the Board, may on the grounds established by the RA legislation prematurely terminate the powers of the Board member appointed by them, and upon notifying the Bank in writing, appoint a new member in the Board.

12.5. Proposals on nominees for the Board members may be submitted at the General Meeting by the Bank Shareholders, as well as by the Board (other than in case of formation of the initial Board). Proposals on candidates for the Board members, including those on self-nomination, shall specify the nominee's name, the fact whether or not he is a Bank Shareholder, number of shares held by him according to types and classes, names (legal names) of Shareholders who have nominated him as a candidate, and number of shares held by the latter according to their types and classes, and other information.

12.5.1. Each time when the Board is formed at the annual Meeting, proposals on nominees for the Board members are submitted according to the procedure defined by the RA legislation and this Charter for submission of proposals on annual Meeting agenda.

12.5.2. In case of premature termination of a Board member's powers, the General Meeting shall at the same sitting elect a new Board member.

12.5.3. If in case of premature termination of a Board member's powers the General Meeting does not elect a new Board member at the same sitting, then the nomination of the candidate for a new Board member shall be carried out according to the procedure specified in paragraphs 12.5-12.5.4. of this Charter.

12.5.4. In case of premature termination of a Board member's powers the Bank participants shall submit to

թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում են Խորհրդին՝ նշելով ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրության 12.5 կետով նշված տեղեկությունները: Խորհրդի նախագահը Բանկի մասնակիցների, ինչպես նաև Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամի թեկնածուի համար ներկայացված առաջարկություններն ուղարկում է Բանկի մասնակիցներին դրանք ստանալուց, իսկ Խորհրդի կողմից ներկայացվելու դեպքում՝ Խորհրդի համապատասխան որոշումն ընդունելու պահից՝ 7-օրյա ժամկետում պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ:

12.6. Խորհուրդը պարտավոր է քննարկել և որոշում ընդունել Խորհրդի անդամության թեկնածուին թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել Խորհրդի անդամության թեկնածուին թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) Խորհրդի անդամության թեկնածուի վերաբերյալ առաջարկությունը բանկի մասնակցի կողմից արվել է սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված ժամկետի խախտմամբ,

բ) Խորհրդի անդամության առաջարկ ներկայացրած բանկի մասնակիցը (մասնակիցները) չի (չեն) տնօրինում Բանկի՝ սույն կանոնադրության 5.3 կետի է) ենթակետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին,

գ) լրիվ չեն կամ բացակայում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրության 12.5 կետով սահմանված տվյալները,

12.6.1. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ Խորհրդի անդամության թեկնածուին թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է թեկնածու ներկայացրած բանկի մասնակցին՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

12.7. Բանկի 10 և ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերն առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իրենց ներկայացուցչին նշանակելու վերաբերյալ իրենց որոշման մասին գրավոր ծանուցում են Բանկի բաժնետերերին և խորհրդին խորհրդի ընտրությունների վերաբերյալ ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ իրենց նշանակած խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ լիազորությունները դադարեցնելուց հետո 30-օրյա ժամկետում կարող են նշանակել խորհրդի նոր անդամ:

12.8. Մինչև 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերը, միավորվելու և բաժնետոմսերի 10 տոկոսը համալրելու դեպքում, եթե կնքել են սույն կանոնադրության 5.6 կետով նախատեսված պայմանագիրը, և այդ մասին ծանուցել բաժնետերերին, իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում առաջարկում են խորհրդի ընտրությունների վերաբերյալ ժողովի կայացման օրվանից, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

12.9. Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը, որոնք չեն կնքել սույն կանոնադրության 5.6 կետով նախատեսված պայմանագիրը, իրենց թեկնածուին կամ թեկնածուներին առաջադրում են Բանկի խորհրդին առնվազն ժողովի կայացման օրվանից 45-օր առաջ, որն էլ ներկայացուցչների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները

the Board proposals on their nominees, specifying the information required by the RA legislation and paragraph 12.5. of this Charter. The Bank Chairman shall send to the Bank participants by registered mail (with a notice of delivery) the proposals on candidates for a new Board member made by the Bank participants, as well as by the Board, within 7 days since the moment of their receipt, and in case of submission by the Board, within 7 days since the moment of taking the relevant decision,.

12.6. The Board shall within 15 days after expiry of the term referred to in subparagraph (g) of paragraph 5.3. hereof consider submitted proposals and take a decision on including the Board member candidates in the list of candidates, or rejecting the inclusion thereof. The Board may take a decision of rejecting the inclusion of Board member candidates in the list of candidates only in case when:

a) the proposal on a Board member candidate has been made with violation of the term referred to in subparagraph (g) of paragraph 5.3. hereof;

b) the Bank participant(s) having submitted the proposal on a Board member candidate does not (do not) possess the number of votes specified in subparagraph (g) of paragraph 5.3. hereof;

c) data stipulated by the RA legislation or paragraph 12.5. of this Charter are not complete or are missing.

12.6.1. The Board's substantiated decision on rejecting the inclusion of a Board member candidate in the list of candidates shall be sent to the nominating Shareholder within 3 days since the moment of adopting such a decision.

12.7. Shareholders possessing 10 percent or more of the Bank's voting shares shall notify the Bank Shareholders and the Board about their decision on being included or appointing their representative in the Board at least 30 days prior to the date of the meeting called for election of the Board, and in case of premature termination of powers of the Board member appointed by them, they may appoint a new Board member within 30 days' period after termination of the former member's powers.

12.8. Shareholders possessing up to 10 percent of the Bank's voting shares, in case of joining and achieving 10 percent of ownership of the Bank's voting shares, and provided that they have concluded the contract referred to in paragraph 5.6. of this Charter and notified the Bank Shareholders about it, shall propose their representative in the Board at least 30 days prior to the date of the meeting called for election of the Board, and in case of voting in absentia - at least 30 days prior to the last date fixed for acceptance of completed ballots by the Bank.

12.9. Shareholders with minor interest, who have not concluded the contract specified in paragraph 5.6. of this Charter, shall nominate their candidate or candidates in the Bank Board at least 45 days prior to the date of the meeting, which shall deliver to all participants of the General Meeting the information concerning proposed representatives at least 30 days prior to the date of the meeting, and in case of voting in absentia - prior to the last date fixed for acceptance of completed ballots by the Bank.

Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

12.10. Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը, որոնք չեն կնքել սույն կանոնադրության 5.6 կետով նախատեսված պայմանագիրը իրենց կողմից առաջադրված թեկնածուներից ընտրում են ներկայացուցիչ՝ ընդհանուր ժողովում: Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են բացառապես փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը, որոնք չեն կնքել սույն կանոնադրության 5.6 կետով նախատեսված պայմանագիրը:

12.11. Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչը համարվում է ընտրված, եթե տվյալ ներկայացուցչի օգտին քվեարկել են փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի կեսից ավելին, իսկ մեկից ավելի թեկնածուներ լինելու դեպքում՝ այն թեկնածուն, որը ստացել է փոքր մասնակցություն ունեցող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների մեծ մասը:

12.12. Բանկի խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

13. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՄՆԵՐԸ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

13.1. Բանկի խորհրդի անդամները ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Բանկի խորհրդի կազմում ընտրված կամ նշանակված անձինք են, որոնք ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված հարցերի սահմաններում իրականացնում են իրենց լիազորությունները և կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

13.2. Բանկի խորհրդի անդամները վարձատրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

13.3. Բանկի խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

13.4. Բանկի խորհրդի անդամները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշերին:

13.5. Բանկի խորհրդի աշխատանքները ղեկավարում է Բանկի խորհրդի նախագահը:

13.6. Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների կազմից:

Բանկի խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում.

ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը.

զ) խորհրդի նիստին հրավիրում է այլ անձանց (այդ թվում՝ նիստի օրակարգում ընդգրկված առանձին հարցերի քննարկմանը մասնակցելու համար), որոնք նիստին մասնակցում են խորհրդի առարկությունների բացակայության դեպքում.

է) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13.7. Խորհրդի նիստ գումարելիս Խորհրդի նախագահը

12.10. Shareholders with minor interest, who have not concluded the contract specified in paragraph 5.6. of this Charter, shall elect from among the candidates nominated by them a representative at the General Meeting. Only the Shareholders with minor interest, who have not concluded the contract specified in paragraph 5.6. of this Charter, may participate in the election of the representative of Shareholders having minor interest.

12.11. The representative of Shareholders with minor interest shall be deemed to be elected, if more than a half of Shareholders with minor interest have voted in his/her favor, and if the number of nominated candidates is more than one, the candidate having received most of the votes of Shareholders with minor interest shall be elected.

12.12. The Board members' term of office shall be fixed by the General Meeting and may not be less than a year.

13. THE BANK BOARD MEMBERS, THE BOARD CHAIRMAN

13.1. Members of the Bank Board shall be the persons elected or appointed in the Bank Board in accordance with the RA legislation and this Charter, who exercise their powers within the limits of competence, attributed to them by the RA legislation and this Charter and bear the liability defined by the RA legislation.

13.2. The Bank Board members are remunerated according to the procedure determined by the Shareholders' General Meeting.

13.3. The Bank Board members may not be affiliated with each other. Members of the Board and the Bank's executive body may not be affiliated persons.

13.4. The Bank Board members shall meet the criteria set by the RA legislation.

13.5. The Bank Board activities are managed by the Board Chairman.

13.6. The Board Chairman is elected by the Board from among its members.

The Board Chairman shall:

a) organize proceedings of the Bank Board;

b) call and presides at the Bank Board meetings;

c) organize the keeping of minutes of the Bank Board meetings;

d) preside at the Bank Shareholders' General Meetings;

e) organize works of the Board commissions;

f) invite other persons to attend Bank Board meetings (including for participation in the discussion of separate issues on the agenda) subject to no objection of the Board;

g) exercise other powers provided for by the RA legislation and this Charter.

13.7. In case of calling a Board meeting, the Board

Խորհրդի անդամներին, գլխավոր գործադիր տնօրենին, իսկ Խորհրդի նիստին մասնակցելու համար այլ անձանց հրավիրելու դեպքում նաև այդ անձանց ծանուցում է նիստի գումարման օրվա մասին և նիստի անցկացումից առնվազն 15 օր առաջ Խորհրդի անդամներին և այլ անձանց ուղարկում է օրակարգում ընդգրկված հարցերը՝ դրանց բովանդակությանը ծանոթանալու համար և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը:

Այն դեպքում, երբ Խորհրդի նիստը գումարվում է հեռակա կարգով կամ ժամանակի իրական ռեժիմում՝ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով, Խորհրդի անդամները և սույն կետում նշված անձինք ծանուցվում են Խորհրդի նիստի գումարման օրվա մասին նիստի անցկացումից առնվազն 15 օր առաջ, իսկ օրակարգում ընդգրկված հարցերը և անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը նրանց ուղարկվում են նիստի անցկացումից առնվազն 7 օր առաջ:

Հրատապ Խորհրդի նիստեր գումարելու դեպքում, նիստի գումարման մասին ծանուցումը օրակարգում ընդգրկված հարցերի և անհրաժեշտ տեղեկությունների և նյութերի հետ միասին Խորհրդի անդամներին և սույն կետում նշված այլ անձանց է ուղարկվում նիստի անցկացումից 1 օր առաջ:

Խորհրդին կից գործող հանձնաժողովների մշակած և ներկայացրած հաշվետվությունները, եզրակացությունները և նրանց կողմից պատրաստված այլ նյութերը Բանկի խորհրդի նախագահը պարտավոր է Խորհրդի քննարկմանը ներկայացնել դրանք ստանալուց հետո գումարվող Խորհրդի առաջին իսկ նիստում:

13.8. Բանկի խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են ընդհանուր ժողովի կողմից իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի խորհրդի անդամ (Բանկի ղեկավար).

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի կամ անհարգելի բացակայությունները)՝ նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և Բանկի կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն:

դ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

13.9. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի համար, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նրա փոխարեն Խորհրդի նոր անդամ ընտրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից ձայների պարզ մեծամասնությամբ՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բանկն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կանոնադրության 13.9 կետով նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի

Chairman shall at least 30 days prior to the meeting notify the Board members, the Chief Executive Officer and in case of inviting other persons to attend the meeting – also to such persons, on the date of convocation of the Board meeting and at least 15 days prior to the meeting deliver in writing to the Board members and other persons the issues included in the agenda, together with information and materials necessary for familiarization with their contents and decision making.

In case of holding the meetings in absentia or in a real time mode by telephone, television communication or other means of communication, the Board members and other persons mentioned hereunder shall be notified on the meeting date at least 15 days prior to the meeting, and the issues included in the agenda together with necessary information and material shall be delivered at least 7 days prior to the meeting.

In case of calling an urgent Board meeting, the notification on the meeting date together with issues included in the agenda and materials shall be delivered to the Board members and other persons mentioned hereunder 1 day prior to the meeting.

Reports and conclusions drawn up and submitted by commissions functioning under the Board, as well as other materials prepared by them shall be submitted by the Board Chairman to the Board for consideration at the first meeting called after their receipt.

13.8. Powers of a Bank Board member shall be terminated by the General Meeting, based on the member's application, or in the following cases:

a) he has been recognized incompetent or partially competent by a court decision having taken legal effect;

b) during his tenure such circumstances have arisen, by virtue of which he is forbidden to hold the office of the Bank Board member (Bank Manager);

c) during one year he has been absent without good cause from at least 1/4 of the Board meetings or, in general, from at least a half of the Board meetings (including for good or unreasonable cause). Within the meaning of this paragraph, participation in real time mode or in absentia, as specified by this Charter, shall be deemed full participation;

c) according to the procedure established by the law, he has been disqualified or deprived of the right to hold certain offices.

13.9. Powers of a Bank Board member may also be prematurely terminated for the remaining term of his office, and if such term is over one year - on condition that the Bank shall compensate him the salary for one year.

In case of premature termination of a Board member's powers, a new Board member shall be elected at the Bank's extraordinary General Meeting by a simple majority of attending participants, in accordance with the procedure established by the law and this Charter.

The Bank has the right to demand from removed Board member to return the salary compensated by the Bank pursuant to paragraph 13.9 of this Charter, if the latter proves to the court the fact of inadequate performance by the Board member of his official duties.

անդամի կողմից պաշտոնական պարտականությունների թերացման փաստը:

14. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1. Բանկի խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը: Ընդ որում, ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով բանկի այն մասնակիցներին, որոնք գրանցված են բանկի մասնակիցների ռեեստրում՝ ընդհանուր ժողովի անցկացումից առաջ և ոչ ուշ, քան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմվելուց հետո 30-օրյա ժամկետում՝ պատվիրված նամակով՝ հանձման մասին ծանուցմամբ, ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն, իսկ դրան ծանոթանալու նպատակով ավելի վաղ ներկայացված պահանջի դեպքում՝ պահանջը ստանալու պահից 5-օրյա ժամկետում նույն եղանակով, ինչ եղանակով ներկայացվել է պահանջը:

գ) հետևյալ անձանց նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

- Բանկի գլխավոր գործադիր տնօրենի.
- Տնօրինության անդամների.
- Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ(ներ)ի՝ գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ.
- Գլխավոր ֆինանսական տնօրենի՝ գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի բաժնի ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի վարչակազմակերպչական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

թ) ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժա) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների,

14. POWERS OF THE BANK BOARD

14.1. The Bank Board shall have the following powers:

a) determination of the main trends of the Bank activities, including approval of the Bank's prospective development plan;

b) convocation of annual and extraordinary General Meetings, approval of their agendas, as well as ensuring the performance of preparatory works connected with their convocation and holding. The list of Bank participants entitled to participate in the General Meeting shall be delivered for familiarization to those participants, who are registered in the Bank Participants' register, before holding the General Meeting and not later than within 30 days after compilation of the list of Bank participants entitled to participate in the General Meeting. The list shall be delivered by registered mail (with the notice of delivery), fax, e-mail or in person, and in case of a request to deliver it earlier for familiarization purposes – within 5 days since the moment of receiving the request and in the same way, as the request was received.

c) appointment of, premature termination of the powers of and approval of remuneration conditions of:

- the Bank's Chief Executive Officer
- members of the Management Committee,
- deputy Chief Executive Officer(s), as recommended by the Chief Executive Officer
- Chief Financial Officer, as recommended by the Chief Executive Officer

d) establishment of internal control standards in the Bank, formation of the Bank's internal audit department, approval of its annual work plan, premature termination of internal audit department employees' powers and approval of their remuneration conditions;

e) approval of the Bank's annual budget versus actual;

f) approval of the Bank's administrative-organizational structure and personnel chart;

g) submission to the General Meeting proposals on dividends payment for each distribution of dividends, including compilation of the list of Shareholders entitled to receive dividends for each event of dividend payment, which shall include those Shareholders whose names appear in the Bank Shareholders' Register as of the date of compiling the list of participants entitled to attend the Bank Shareholders' annual General Meeting;

h) preliminary approval of the Bank's annual financial statements and submission to the General Meeting for approval;

i) representation of the person who will carry out the Bank's external audit to the General Meeting for approval;

j) determination of the size of remuneration for the person carrying out the Bank's external audit;

k) taking measures, when appropriate, directed at correction of violations revealed as a result of audits or other inspections conducted at the Bank, and control

անհրաժեշտության դեպքում, վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժբ) Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժգ) Բանկի ներքին կանոնակարգերի, այդ թվում՝ վարչությունների և բաժինների կանոնակարգերի հաստատումը, տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի վարչությունների և բաժինների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

ժդ) սույն կանոնադրության 11.2 կետի բ), ժբ)-ժգ) կետերով նախատեսված հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.

ժե) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժզ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժէ) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժը) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժթ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող՝ Բանկի բաժնետերերի ցուցակի կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա.

ի) օրենքով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ընդհանուր ժողովի կողմից խորհրդի լուծմանը փոխանցված այլ որոշումների ընդունումը.

իա) բանկի մասնակցի պահանջով վերջինիս տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին պահանջը ստանալու պահից 5-օրյա ժամկետում նույն կերպ, ինչ կերպ ներկայացվել է պահանջը.

իբ) սահմանում է բանկում կատարվող փաստաթղթաշրջանառության և բանկային փաստաթղթերի ձևակերպման կարգը.

իգ) հաստատում է Բանկի գործունեությանը վերաբերող քաղաքականությունները և ընթացակարգերը:

14.2. Սույն կանոնադրության 14.1 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը, և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց, բացառությամբ 14.1 կետի բ) ենթակետի երկրորդ նախադասությամբ և իբ) ենթակետերով նախատեսված դեպքերի, երբ այդ իրավասությունները կարող են իրականացվել նաև ՀՀ օրենսդրությամբ դրանք իրականացնելու իրավասությամբ օժտված այլ անձանց կողմից:

14.3. Բանկի խորհուրդն առնվազն տարին մեկ անգամ իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը: Խորհուրդը քննարկում է տնօրինության կողմից ներկայացված կարգերի ու ներքին իրավական այլ ակտերի նախագծերը:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվության

over their implementation;

l) adoption of internal legal acts that establish the procedure for execution by the Bank of the financial operations defined by the RA legislation;

m) approval of internal regulations of the Bank, including the regulations of the Bank's divisions and departments, approval of the charters of the Bank's territorial subdivisions, distribution of functional duties among the Bank's divisions and departments;

n) submission of issues referred to subparagraphs b), l) and p) of paragraph 11.2. to the Shareholders' General Meeting for consideration;

o) taking decisions on placing the Bank's bonds and other securities;

p) use of the Bank's reserve and other funds;

q) creation of the Bank branches, representative offices and establishments;

r) defining the Bank's accounting policy principles, methods, rules, forms and procedures applied for conducting accounting and preparation of financial statements;

s) approval of the date, month and year of compiling the list of the Bank Shareholders entitled to participate in the General Meeting, based on the data contained in the Bank Shareholders' Register;

t) adoption of other decision transferred by the General Meeting to the Board for resolution according to the procedure stipulated by the Law and this Charter;

u) at a Bank participant's request, issuing him a reference within 5 days since the moment of receiving his request on inclusion in the list of participants entitled to participate in the General Meeting and in the same way as the request was received;

v) establish the procedure for document circulation in the Bank and formulation of bank documents;

w) approve policies and procedures related to the operation of the Bank.

14.2. Resolution of matters listed in paragraph 14.1. of this Charter is reserved to the exclusive competence of the Bank Board and may not be transferred to the Bank's other management bodies or other persons, with the exception of cases provided for in second sentence of subparagraph 14.1. (b) and subparagraph (v), when those powers can also be exercised by other persons empowered by the RA legislation for their exercising.

14.3. The Bank Board shall at least once a year consider at its meeting the report (Management Letter) of the person carrying out the Bank's external audit, as well as review and revise, where appropriate, basic directions of the Bank activities, its strategies, procedures and other internal legal acts. The Board shall consider the draft procedures and other internal legal acts submitted by the Management Committee.

Prior to consideration of matters related to the report of

(նամակ ղեկավարությանը), Բանկի գործունեության հիմնական ուղղությունների, ռազմավարության հետ կապված հարցերը քննարկելուց առաջ Խորհրդի նախագահի կողմից Խորհրդի անդամների կազմից նշանակվում է զեկուցող, իսկ անհրաժեշտության դեպքում որպես զեկուցող է նշանակվում գլխավոր գործադիր տնօրենը: Ձեկուցող նշանակվելու մասին զեկուցողը տեղեկանում է Խորհրդի նախագահից՝ այդ որոշումը կայացնելու պահից յոթնօրյա ժամկետում՝ պատվիրված նամակով կամ այլ եղանակով:

Ձեկույցի ավարտից հետո Խորհրդի անդամները և Խորհրդի նիստին հրավիրված անձինք, անհրաժեշտության դեպքում, հարցեր են ուղղում զեկուցողին, որից հետո հարցը դրվում է քվեարկության: Քվեարկվող հարցի կապակցությամբ Խորհուրդն ընդունում է որոշում:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվության (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև Բանկի գործունեության հիմնական ուղղությունների, ռազմավարության հետ կապված հարցերը քննարկման արդյունքում քվեարկության դրված հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին ներկա Խորհրդի անդամների կողմից՝ միաձայն: Բանկի Խորհրդի կողմից կարգերի ու ներքին իրավական այլ ակտերի քննարկման արդյունքում քվեարկության դրված հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

14.4. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի բաժնի, տնօրինության, գլխավոր գործադիր տնօրենի և գլխավոր ֆինանսական տնօրենի հաշվետվությունները: Հաշվետվությունները ներկայացվում են գրավոր ձևով, ներքին աուդիտի բաժնի ղեկավարի, գլխավոր ֆինանսական տնօրենի և գլխավոր գործադիր տնօրենի կողմից, Խորհրդի նիստ հրավիրելուց առնվազն 3 օր առաջ, որոնք հետագայում ընդգրկվում են Խորհրդի նիստի օրակարգում: Ներկայացված հաշվետվությունները Խորհրդի կողմից հաստատվում են Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Բանկի Խորհրդին և տնօրինությանը գլխավոր ֆինանսական տնօրենի կամ այլ բաժնիների կողմից ներկայացվող հաշվետվությունները պարունակում են հաշվետվությունների նկարագրությունը, այն կազմող պատասխանատու աշխատողներին, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը:

14.5. Բանկի Խորհուրդն իր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն Խորհրդակցական բնույթ:

Խորհուրդը հանձնաժողով կարող է ստեղծել ինչպես կոնկրետ հարցի կապակցությամբ, որի լուծումից հետո այն կարող է արձակվել, այնպես էլ Խորհրդի ամենօրյա աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար, որի գործունեության ժամկետը սահմանվում է Խորհրդի որոշմամբ: Խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունն ուղղված է շուկայում բանկի շահերի պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքների ապահովմանը, խորը մասնագիտական հետազոտությունների և դիտարկումների արդյունքում կազմված նյութերով Խորհրդի աշխատանքներին օժանդակմանը և կատարելագործմանը, որից ելնելով՝ կարող են ստեղծվել հանձնաժողովներ ըստ անհրաժեշտության՝ ֆինանսավարկային, ռիսկերի կառավարման, ինչպես նաև

the person carrying out the external audit (Management Letter), basic directions of the Bank activities and its strategies, the Board Chairman shall appoint a reporter from among the Board members, and where appropriate, the Chief Executive Officer may be appointed as a reporter. The reporter shall be informed about his appointment as such by the Board Chairman within 7 days' period since the date of adoption of such a decision, either by registered mail or otherwise.

After completion of the report the Board members and other persons invited to attend the Board meeting may, when necessary, address their question to the reporter, after which the issue shall be put to vote. The Board shall adopt a decision on the issue put to vote.

Decisions on issues put to vote as a result of consideration of matters related to the report of the person carrying out the external audit (Management Letter), basic directions of the Bank activities and its strategies, shall be adopted unanimously by the Board members present at the Board meeting. Decisions on issues put to vote as a result of consideration of procedures and other internal legal acts shall be adopted by a simple majority of the Board members' votes.

14.4. The Bank Board shall at least once in a quarter consider reports of the Bank's internal audit department, the Management Committee, the Chief Executive Officer and Chief Financial Officer. The reports shall be submitted in writing by the Head of Internal Audit department, the Chief Financial Officer and the Chief Executive Officer at least 3 days before convocation of the Board meeting, which will further be included in the Board meeting agenda. Submitted reports are approved by a simple majority of the Board members' votes.

The reports from the Chief Financial Officer or other departments to the Board or to the Management Committee shall contain the description of the report, name of the person responsible for the report, as well as the frequency of the report.

14.5. With the purpose of effective organization of its activities the Bank Board may create commissions. In the Bank Board commissions may be included members of the Board and other managers or employees of the Bank. Decisions of the Bank Board commissions are of consultative nature.

The Board may create a commission both for solution of a specific issue, after resolution of which the commission may be dismissed, as well as for efficient organization of the Board's daily activities, in which case the term of the commission activities shall be defined by the Board decision. Activities of the Board commission are targeted at ensuring additional guarantees for protection of the Bank interests in the market, supporting and improving the Board activities with materials prepared as a result of thorough professional studies and observations, based on which commissions may be established, as appropriate, for resolution of financial and credit, risk management issues, as well as other issues relating to conducting of activities in compliance with corporate management

Խորհրդի կողմից լուծման ենթակա և կորպորատիվ կառավարման չափանիշներին համապատասխան գործունեության իրականացման հետ կապված այլ հարցերի կապակցությամբ:

15. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

15.1. Բանկի խորհուրդը կոլեգիալ մարմին է և որոշումներն ընդունում է նիստեր գումարելու միջոցով: Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ:

15.2. Բանկի խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կամ տնօրինության, ներքին աուդիտի բաժնի ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ գրավոր պահանջով:

15.3. Բանկի խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Բանկի խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կանոնադրության 14.1 կետի գ), դ), ժ) և ժդ) ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ: Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստն անցկացվում է այնպես, որ Խորհրդի բոլոր անդամները հնարավորություն ունենան միաժամանակ հաղորդակցվելու միմյանց հետ, ընկալելու Խորհրդին մասնակցող անձանց արտահայտած կարծիքները, առաջադրած հարցադրումները, արտահայտելու դրանց վերաբերյալ իրենց կարծիքները և քվեարկելու առաջադրված հարցերի շուրջ: Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացված նիստում քվեարկությունն իրականացվում է անվանական քվեարկությամբ՝ նիստը նախագահողի կողմից Խորհրդում քվեարկելու իրավունք ունեցող անձանցից կատարված անվանական հարցման միջոցով:

15.4. Բանկի խորհրդի նիստը քվորում ունի (իրավասու է), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների առնվազն կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Բանկի կանոնադրությամբ կամ Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատած Բանկի խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

15.5. Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

15.6. Բանկի խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի:

criteria, which are subject to resolution by the Board.

15. THE BANK BOARD MEETINGS

15.1. The Bank Board is a collegial body and adopts decisions by means of convocation of meetings. The Bank Board meetings shall be called at least once in two months.

15.2. The Bank Board meetings are called by the Board Chairman at his own initiative or upon written request of a Board member, the Bank's Chief Executive Officer or the Management Committee, Head of internal audit department, the person conducting external audit, the Board of the Central Bank as well as a Bank Shareholder possessing 5 percent or more of the Bank's voting shares.

15.3. The Bank Board meetings may be held in absentia, in accordance with the procedure established by the Bank Charter for calling and holding meetings in absentia. The Bank Board may take decisions at such a sitting, during which all participants of the Board meeting can communicate with each other in real time mode by telephone, television communication or other means of communication. Such sitting shall not be considered as being held by voting in absentia (by inquiry). Matters referred to in subparagraphs c), d), j) and n) of paragraph 14.1 hereof, as well as matters concerning approval of the Bank's perspective development plan and election of the Board Chairman may not be resolved at a Board meeting conducted in absentia. The Board meeting held in real time mode shall be conducted in such a manner as to enable all participants of the meeting to communicate with each other simultaneously, perceive the opinions expressed by the meeting participants, issues raised at the meeting, express their opinions and vote on such issues. Voting at a meeting held in real time mode via telephone, television communication or other means of communication is carried out by nominal voting through inquiries addressed by the Chair to the persons entitled to vote at the meeting.

15.4. The Bank Board meetings shall be eligible (quorum present), if at least half of the Board members participate in it. Decisions of the Board meetings shall be passed by a majority of votes of the meeting participants, unless otherwise is provided by the law or unless a larger number is required by the Bank Charter or Regulations on the Bank Board approved by the Shareholders' General Meeting.

15.5. During voting each Board member shall have one vote. The transfer of vote or voting right to another person (including another member of the Board) is prohibited. In case of equal votes the Board Chairman shall have the casting vote.

15.6. The Bank Chief Executive Officer's participation in consideration of all matters of the Board meetings is mandatory, other than matters concerning premature termination of the Chief Executive Officer's powers or approval of his remuneration conditions.

15.7. Բանկի խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած խորհրդի յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

15.8. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար: Խորհրդի որոշումներն ստորագրում է խորհրդի նախագահը, որը և պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

15.9. Հեռակա քվեարկությամբ նիստ գումարելիս խորհրդի նախագահը խորհրդի անդամներին և Բանկի գլխավոր գործադիր տնօրենին սույն կանոնադրության 13.7 կետով սահմանված ժամկետներում գրավոր ձևով ուղարկում է օրակարգում ընդգրկված հարցերը, դրանց բովանդակությանը ծանոթանալու և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը նիստի անցկացման օրվանից առնվազն 30 օր առաջ: Պատվիրված նամակով խորհրդի նիստի կազմակերպման մասին ծանուցման ապահովումն այն կազմակերպելու պարտավորություն կրող անձի կողմից համարվում է կատարված ծանուցման մասին ծրարը փոստային ծառայությանը հանձնելու պահից: Ծանուցման այլ եղանակ կարող է սահմանվել խորհրդի որոշմամբ:

15.10. Հեռակա կարգով նիստեր գումարելիս խորհրդի անդամները օրակարգ ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկում են քվեաթերթիկների միջոցով, որոնց ձևը և բովանդակությունը հաստատում է Խորհուրդը:

15.11. Հեռակա կարգով անցկացված խորհրդի նիստին մասնակցած խորհրդի անդամները պարտավոր են իրենց կողմից լրացված քվեաթերթիկները պատվիրված նամակով կամ անձամբ հանձնել խորհրդի նախագահին՝ մինչև սույն կանոնադրությամբ սահմանված քվեարկության արդյունքներն ամփոփելու համար սահմանված վերջնաժամկետի լրանալը:

15.12. Հեռակա կարգով քվեարկության արդյունքներն ամփոփելու համար վերջնաժամկետ է սահմանվում խորհրդի նիստի անցկացման օրվանից հաշվված 10-րդ օրացուցային օրը: Եթե վերջնաժամկետի լրանալու օրը համընկնում է տոնական, հիշատակի կամ ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այն երկարաձգվում է մինչև այդ օրվանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

15.13. Հեռակա կարգով անցկացված խորհրդի նիստի արդյունքների ամփոփումն իրականացվում է խորհրդի նախագահի կողմից, որն էլ ապահովում է խորհրդի մնացած անդամների ծանուցումը արձանագրության պատրաստ լինելու և վերջիններիս կողմից 10-օրյա ժամկետում ծանուցման մեջ նշված վայրում նրանց կողմից արձանագրությունը ստորագրելու պարտականության մասին: Հեռակա կարգով անցկացված խորհրդի նիստում որոշումները պետք է ընդունվեն խորհրդի բոլոր անդամների կողմից միաձայն:

15.14. Խորհրդի անդամներից որևէ մեկի կողմից

15.7. The Board meetings are minuted. Minutes of the Board meeting shall be prepared within 10 days' period after its closing. Minutes shall contain the following information:

a) year, month, date, time and place of convocation;

b) participating persons;

c) meeting agenda;

d) matters put to vote, as well as voting results according to each Board member having participated in the meeting;

e) opinions of the Board members and other attending persons on matters put to vote;

f) decisions passed at the meeting.

15.8. Minutes of the Board meeting shall be signed by all participating members, who shall bear responsibility for accuracy and reliability of data contained in the minutes. The Board decisions shall be signed by the Board Chairman, who shall bear responsibility for reliability of data contained in the decisions.

15.9. In the case of holding a meeting by voting in absentia, the Board Chairman shall, within the period set in paragraph 13.7 hereof, deliver in writing to the Board members and the Chief Executive Officer, the issues included in the agenda, together with information and materials necessary for familiarization with their contents and decision making. The delivery by registered mail of the notice on convocation of the Board meeting in absentia by the person responsible for its organization shall be deemed to be performed since the moment of handing over the envelope containing the notice to the postal service. The Board meeting may resolve on establishing another procedure for notification.

15.10. In case of holding meetings by voting in absentia, the Board members shall vote on matters included in the agenda through ballots, the form and contents of which shall be approved by the Board.

15.11. Board members having participated in the Board meeting held by voting in absentia shall deliver their completed ballots to the Board Chairman, either by registered mail (with notice of delivery) or in person, before the deadline fixed by this Charter for summarization of voting results.

15.12. The deadline for summarizing the results of voting in absentia is established the 10th calendar day from the date of holding the Board meeting. If the deadline coincides with a holiday, memorial day or a non-business day, it shall be extended till the first business day following the date of the deadline.

15.13. Summarization of the results of the Board meeting held in absentia shall be performed by the Board Chairman, who shall also ensure that the remaining Board members are notified of the fact that the meeting minutes are ready and of their obligation to sign the minutes during 10 days at the place specified in the notice. Resolutions of the Board meetings held in absentia shall be made by unanimous consent of all the members of the Board.

15.14. In the event when any of the Board members refuses to sign the minutes, he shall be obliged to make

արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում վերջինս դրանում պարտավոր է գրավոր նշում կատարել իր կողմից այն չստորագրելու պատճառների մասին:

a written statement on reasons for refusal to sign the minutes.

16. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

16. THE EXECUTIVE BODIES

16.1. Բանկի ընթացիկ գործունեությունը ղեկավարում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենը և տնօրինությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենն իրականացնում է նաև տնօրինության նախագահի գործառույթները:

16.1. The Bank's day-to-day activities shall be managed by the Chief Executive Officer and the Management Committee of the Bank. The Chief Executive Officer of the Bank also acts in the capacity of the President of the Management Committee.

16.2. Գլխավոր գործադիր տնօրենը՝

16.2. The Chief Executive Officer shall:

ա) ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

a) represent the Bank both in the Republic of Armenia and foreign states;

բ) գործում է Բանկի անունից առանց լիազորագրի.

b) act without a proxy on behalf of the Bank,

գ) տալիս է լիազորագրեր՝ ստանալով տնօրինության նախնական եզրակացությունը.

c) grant powers of attorney, with a prior recommendation from the Management Committee;

դ) Բանկի անունից կնքում է գործարքներ՝ ստանալով տնօրինության նախնական եզրակացությունը.

d) execute transactions on behalf of the Bank with a prior recommendation from the Management Committee;

ե) արձակում է հրամաններ, հրահանգներ, այլ կատարման ենթակա ցուցումներ՝ տնօրինության նախնական համաձայնությամբ.

e) issue orders, instructions, other binding directives with prior recommendation from the Management Committee.

ե) իրականացնում է Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը:

f) manage day-to-day activity of the Bank.

16.3. Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրա լիազորությունները և պարտականությունները իրականացնում է իր հրամանով լիազորված, Կենտրոնական բանկի սահմանած որակավորման եւ մասնագիտական համապատասխանության չափանիշներին համապատասխանող՝ Կենտրոնական բանկում գրանցված անձը:

16.3. In case of the Chief Executive Officer's absence, his powers and duties, as authorized by his order, shall be delegated to another person, whose qualifications and professional integrity are in compliance with the requirements determined by the Central Bank and who is registered with the Central Bank.

16.4. Գլխավոր գործադիր տնօրենը որոշումներ է կայացնում գրավոր փաստաթղթի տեսքով:

16.4 The Chief Executive Officer shall take decisions in the form of written documents.

16.5. Տնօրինությունը՝

16.5 The Management Committee shall:

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

a) manage the Bank property, including financial means; issue orders, instructions and other binding directives, and exercise control over their execution;

բ) աշխատանքի է ընդունում և ազատում աշխատողների, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցներ, բացառությամբ՝ տնօրինության անդամների.

b) hire and dismiss staff, apply incentives and disciplinary actions thereto with the exception of Management Committee members;

գ) ստեղծում է ժամանակավոր հանձնաժողովներ՝ նրանց վրա դնելով կոնկրետ պարտականություններ.

c) create temporary commissions, laying definite duties on them;

դ) ստեղծում է մշտապես գործող խորհրդակցական մարմիններ՝ հանձնաժողովների ձևով.

d) create standing consultative bodies in the form of commissions;

ե) Խորհրդի հաստատման է ներկայացնում Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի ներքին կանոնակարգերի, այդ թվում՝ վարչությունների և բաժինների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

e) submit for the Board's approval the charters of the Bank's territorial subdivisions, the Bank's internal regulations, including the regulations of divisions and departments, the administrative-organizational structure of the Bank;

զ) որոշումներ է ընդունում թղթակցային հարաբերությունների հաստատման և թղթակից բանկերին առնչվող այլ հարցերի վերաբերյալ.

f) take decisions with regard to the establishment of correspondent relations and other issues related to correspondent banks;

է) ապահովում է Բանկի քաղաքականության և ընթացակարգերի իրագործումը և կատարումը.

g) ensure implementation and execution of the Bank's policies and procedures;

ը) որոշում է կայացնում բանկերի, հաճախորդների և կառույցների՝ խորհրդի կողմից սահմանված գումարի չափը չգերազանցող բոլոր վարկային առաջարկների վերաբերյալ (անկախ բնույթից).

h) take decisions on all credit proposals (of whatever nature) emanating from banks, clients and institutions and not exceeding the amount established by the Board;

թ) համապատասխան բաժինների հետ համատեղ

i) examine classified facilities and determine

հետազոտում է դասակարգված վարկային գծերը և սահմանում համապատասխան ֆինանսական դրույթներ՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ իրավական քայլերը:

ժ) քննարկում և Բանկի խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Բանկի նպատակների, տարեկան գործառնական ծրագրի և տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ:

ժա) պարբերաբար ուսումնասիրում է բյուջետային վերահսկողության հաշվետվությունները, շահույթների և վնասների մասին հաշվետվությունը և հաճախորդների, բանկերի և այլ հաստատությունների չմարված պարտավորությունների ցանկը:

ժբ) վերանայում և գնահատում Բանկի բյուջեով չնախատեսված՝ 5 միլիոն դրամը գերազանցող գնումները և դրանց վերաբերյալ տալիս եզրակացություն:

ժգ) որոշումներ է կայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատված ներդրումային քաղաքականության շրջանակներում արժեթղթերում ներդրում կատարելու վերաբերյալ (բացառությամբ Հայաստանի պետական պարտատոմսերի):

ժդ) շաբաթական կտրվածքով վերահսկում և կառավարում է Բանկի մնացորդային արտարժույթային դիրքերը և ընդհանուր լիկվիդայնությունը՝ հաշվի առնելով օրենսդրական պահանջները:

ժե) ուսումնասիրում է միջազգային կառույցներից և հիմնադրամներից ֆինանսավորման ստացման հնարավորությունները և առաջարկներ ներկայացնում Բանկի խորհրդին:

ժզ) ապահովում է բանկային ոլորտին վերաբերող բոլոր օրենքների, իրավական ակտերի և ՀՀ Կենտրոնական Բանկի ընդունած որոշումների կամ կանոնակարգերի կիրառումը և իրականացումը:

ժէ) հաստատում է Բանկի կողմից ծառայությունների մատուցման սակագները:

ժը) առաջարկություններ է ներկայացնում Բանկի խորհրդին Բանկի կողմից նոր ծառայությունների մատուցման վերաբերյալ:

ժթ) սահմանում է Բանկի ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքները՝ ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:

ի) ապահովում է անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ փողի լվացման և այլ անօրինական գործողությունների հնարավորությունը բացառելու նպատակով:

իա) ապահովում է գործառնական ընթացակարգերի, «Ամենօրյա ներքին վերահսկողության ձեռնարկի» և այլ ընթացակարգերի արդյունավետ կատարումը Բանկում:

իբ) քննարկում է աուդիտորական հաշվետվությունները և պատասխանատու է դրանց հետևելու և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու համար:

16.6. Տնօրինության կառուցվածքում ընդգրկված է հինգ անձ, որոնք նշանակվում են Խորհրդի կողմից, ընդ որում Բանկի գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը (նշանակված լինելու դեպքում), գլխավոր ֆինանսական տնօրենը պարտադիր ընդգրկվում են տնօրինության կազմում: Տնօրինությունը գործում է Բանկի կանոնադրության և ինչպես նաև Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին կանոնակարգի հիման վրա:

16.7. Տնօրինության որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Տնօրինության նախագահի ձայնը վճռորոշ է:

16.8. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը Բանկի խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ

the appropriate financial provisions in liaison with the relevant department and taking all legally required steps;

j) discuss and submit suggestions to the Board of the Bank regarding the Bank's objectives, annual operating plan and annual budget execution;

k) periodically examine the budgetary control reports, the profit and loss accounts, and the list of outstanding obligations of clients, banks and other institutions;

l) review and assess the purchasing of the Bank, which exceed AMD 5 million and are not envisaged by the Bank's budget and provide further recommendations thereon;

m) take decisions on investments in securities (except for Armenian state bonds) within the scope of the investment policy approved by the Board of the Bank;

n) monitor and manage the overall liquidity and residual foreign exchange positions of the Bank on a weekly basis taking into consideration the regulatory requirements;

o) explore funding opportunities from international institutions and funds and make propositions to the Board of the Bank;

p) ensure the application and implementation of all laws and regulations relating to the banking industry and all decisions or regulations issued by the Central Bank of Armenia;

q) approve tariffs of services rendered by the Bank;

r) submit suggestions to the Board of the Bank with regard to new services to be rendered by the Bank;

s) define interest rates for the Bank's asset and liability transactions in accordance with the RA legislation;

t) ensure that the necessary measures are taken to prevent any opportunities for money laundering or other illegal operations;

u) ensure that the operational procedures, the "Manual of Daily Internal Control" and other procedures are effectively applied across the Bank;

v) review audit reports and be responsible for following these reports and taking all the necessary measures.

16.6 The Management Committee shall be comprised of five members appointed by the Board, whereas the Chief Executive Officer, Deputy Chief Executive Officer (if appointed), and Chief Financial Officer must be included in the Management Committee. The Management Committee shall act on the basis of the Bank Charter and an internal regulation approved by the Board of the Bank.

16.7 The decisions of the Management Committee shall be made by a majority vote. In case of equal distribution of votes, the casting vote will be that of the President of the Management Committee.

16.8 The Bank's Chief Executive Officer shall periodically, but not less than once in a quarter submit to the Board a report on its activities and the activities of

ներկայացնում է իր, ինչպես նաև տնօրինության գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ սույն կանոնադրության 14.4 կետով սահմանված կարգով:

the Management Committee, in accordance with the procedure specified in paragraph 14.4. of this Charter.

17. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

17.ACCOUNTING AND REPORTING AT THE BANK

17.1. Բանկը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկի գլխավոր ֆինանսական տնօրենը, իրականացնելով գլխավոր հաշվապահի պարտականությունները, պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան: Գլխավոր ֆինանսական տնօրենը Բանկի առջև պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով բանկին պատճառած իրական վնասի համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Նյութական, վարչական և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ ձևերից բացի՝ գլխավոր ֆինանսական տնօրենն իր վրա դրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

17.1. The Bank shall carry out accounting and submit financial statements according to the procedures established by the RA legislation. In accordance with the law, other legal acts and the Bank Charter, the Bank's Chief Financial Officer, performing the duties of the chief accountant, shall be responsible for conducting accounting, its state and reliability, timely submission of annual reports, financial and statistic reports to government authorities defined by the laws and other legal acts, as well as for reliability of the Bank's financial information furnished to the Bank Shareholders, creditors, the press and other mass media. The Chief Financial Officer shall pursuant to the RA legislation bear responsibility before the Bank for real damages caused to the Bank due to his intentional actions (inactivity). Besides material, administrative and other forms of responsibility stipulated by the RA legislation, disciplinary sanction may also be imposed on the Chief Financial Officer for non-performance or improper performance of duties assigned to him.

17.2. Բանկի գլխավոր ֆինանսական տնօրենն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և տնօրինությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ սույն կանոնադրության 14.4 կետով սահմանված կարգով:

17.2. The Bank's Chief Financial Officer shall at least once in a quarter submit to the Bank Board and the Management Committee a financial statement in accordance with the procedure defined by paragraph 14.4 of this Charter.

18. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ

18. INTERNAL AUDIT OF THE BANK

18.1. Բանկն իր կառուցվածքում ունի ներքին աուդիտի բաժին, որը ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, խորհրդի հաստատած կանոնակարգի և ներքին աուդիտի բաժնի տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացնում է իր գործառնությունները: Ներքին աուդիտի բաժնի քանակական կազմը և լիազորությունների ժամկետը սահմանում է Բանկի խորհուրդը:

18.1. The Bank shall have in its structure an internal audit department, which will perform its functions in accordance with the RA legislation, this Charter, Regulations approved by the Board and annual work plan of the internal audit department. Number of the internal audit department members and term of their authorities shall be defined by the Bank Board.

18.2. Բանկի ներքին աուդիտի բաժինը՝
ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.
բ) հսկողություն է իրականացնում Բանկի տնօրինության և գլխավոր գործադիր տնօրենի, վարչությունների, բաժինների և տարածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, գլխավոր գործադիր տնօրենին և/կամ տնօրինությանը տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.
գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

18.2. The Bank's internal audit department shall:
a) effect control over the Bank's current activities and operational risks;
b) exercise control over compliance by the Bank Management Committee and the Chief Executive Officer, divisions, departments and territorial subdivisions, with requirements of the laws, other legal acts and the Bank's internal acts, as well as over fulfillment of recommendations issued to the Chief Executive Officer and/or the Management Committee;
c) prepare conclusions and proposals on issues submitted by the Bank Board and raised at its own initiative.

18.3. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը խորհրդին և տնօրինությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

18.3. The Head of internal audit department shall submit the following reports to the Board and the Management Committee:

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

a) ordinary, i.e. concerning results of inspections envisaged by the annual program;

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի բաժնի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են տնօրինության, գլխավոր գործադիր տնօրենի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում: Ներքին աուդիտի բաժնի հաշվետվությունները Բանկի խորհրդի նախագահին և տնօրինությանը ներկայացվում են առձեռն, փոստով կամ կապի այլ միջոցներով:

18.4. Ներքին աուդիտի բաժնին օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

18.5. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից, որը և որոշում է կայացնում ներքին աուդիտի բաժնի ղեկավարի և անդամների վարձատրության պայմանների սահմանման, ինչպես նաև լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Ներքին աուդիտի բաժնի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

18.6. Ներքին աուդիտի բաժնի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

18.7. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

18.8. Ներքին աուդիտի բաժնի կողմից աշխատանքային կարգապահության խախտումներ հայտնաբերելու, կամ տնօրինության անդամների կամ գլխավոր գործադիր տնօրենի կողմից համապատասխան ծանուցումներ ստանալու դեպքերում Բանկի խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ է ձեռնարկում: Ներքին աուդիտի բաժնի ղեկավարի և անդամների լիազորությունները կարող են դադարեցվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

18.9. Ներքին աուդիտի բաժնի կողմից ստուգումներն իրականացվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված հաճախականությամբ և կարգով:

19. ԲԱՆԿԻ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ

19.1. Բանկի լուծարմամբ Բանկի գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

19.2. Բանկը լուծարվում է՝

ա) լիզենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

բ) լիզենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

գ) «Բանկերի և վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում.

դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ.

ե) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

19.3. Բանկի լուծարման դեպքում նրա միջոցները (ներառյալ Բանկի գույքի իրացումից ստացված միջոցները) ուղղվում են Բանկի պարտատերերի պահանջների բավարարմանը, որից

b) extraordinary, if the internal audit department has reasonable grounds to believe that it has revealed material violations, and where such violations have resulted from actions or inactivity of the Management Committee, the Chief Executive Officer or the Board, the report shall be submitted directly to the Board Chairman.

In cases envisaged by this paragraph, reports shall be submitted no later than within two business days after detection of the violation. Reports of the Internal Audit department may be submitted to the Board Chairman and the Management Committee by hand, through mail or other means of communication.

18.4. In case of revealing violations of the laws or other legal acts, the internal audit department shall be liable to inform the Bank Board about such violations, at the same time recommending measures targeted at their correction and prevention of their further occurrence.

18.5. The Head and members of internal audit department are appointed by the Bank Board, which takes a decision on the remuneration terms of the Head and members of the internal audit department, as well as on the premature termination of their powers. Members of the Bank management bodies, other managers and employees, as well as persons affiliated with the executive body members, may not be members of internal audit department.

18.6. Matters falling within the competence of internal audit department may not be transferred to the Bank management bodies or other persons for resolution.

18.7. The Head and members of internal audit department shall act in compliance with disciplinary rules established for the Bank employees.

18.8. In the event of revealing violations of disciplinary rules by the internal audit department, or receiving relevant notices by the Bank Chief Executive Officer or the members of the Management Committee, the Bank Board shall undertake the responsibility measures established by the RA legislation. Powers of the Head and members of the Internal Audit department may be prematurely terminated only in cases and according to the procedure defined by the RA legislation.

18.9. Inspections shall be carried out by the internal audit department in a frequency and order established by the Board of the Bank.

19. LIQUIDATION OF THE BANK.

19.1. In the event of the Bank liquidation, its activities shall be terminated without transfer of the Bank's rights and liabilities to other persons in the order of succession.

19.2. The Bank shall be liquidated:

a) in case of invalidation of license;

b) in case of revocation of license;

c) in cases envisaged by the RA Law "On Bankruptcy of Banks and Credit Institutions, Investment Companies and Insurance Companies";

d) by the decision of the General Meeting;

e) on other grounds stipulated by the law.

19.3. In the event of the Bank liquidation all assets (including proceeds from the Bank property sale) shall be directed to the satisfaction of the Bank creditors' claims, and the remaining assets shall be distributed

հետո մնացած միջոցները բաշխվում են բանկի բաժնետերերի միջև նրանց բաժնետոմսերին համապատասխան:

19.4. Բանկի լուծարման ընթացակարգը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.5. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնել Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

among the Bank Shareholders in proportion to their shares.

19.4. The Bank's liquidation shall be carried out in compliance with the procedure established by the RA legislation.

19.5. The General Meeting will be entitled to take a decision on the Bank liquidation, if the Bank has no liabilities with respect to the Bank depositors, holders of bank accounts and creditors in money transfer transactions.